

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ԱՍՈՐԻՆԵՐԸ

Ե. ԼԱԼԱՅԵԱՆԻ

ԱՍՈՐԻՆԵՐԻ ԵՐԿԻՐԸ

Վանայ վիլայէթի ասորիները գլխաւորապէս կենտրոնացած են Հաքիարի սանջակի արեւմտահարաւային մասում, Մեծ-Ջաբ գետի միջին ընթացքում, ինչպէս նաև ցրուած Բէյթէլէբարում, Շամգինանում, Գեաւառում, Թիմարում, Արճէշում:

Թողնելով մի առ մի նկարագրել ասորական գիւղերը Վասպուրականի տեղագրական բաժնում, այստեղ ընդհանուր գծերով բնորոշենք այն վայրը՝ ուր ասորիները կարողացել են պահպանել իրենց ինքնուրոյն, անկախ գիւղքը, և որը անագին ազդեցութիւն ունի սրանց բնաւորութեան, կենցաղի և պարագմունքի վրայ:

Ասորիների տոնական (աշիրէթային) երկիրը՝ Թիար, Թըխում, Բագ, Զելու, Դէզ՝ չափազանց լեռնոտ է: Ընդհանուր առմամբ Զելուի կոշուած լեռնաշղթաների բազմաթիւ ճիւղերը միմեանց կտրատելով յառաջացնում են փոքրիկ, նեղ հովիտներ, որոնց միջև հազորդակցութիւնը չափազանց դժուար է կատարւում: Լեռներն ընդհանրապէս մերկ են, ապառաժոտ և շատ տեղ ուղղահայեաց. ամենաբարձր գագաթը՝ Դուրիկ՝ հասնում է 13,000 տոննաչափ բարձրութեան: Լեռներից միայն միքանիսը, այն էլ ոչ ամբողջովին, այլ միայն կրճքերը, պատած են մացառներով:

Մասնորակ աղբիւրներ, արագահոտ վտակներ գրեթէ ամեն մի լեռան լանջից գլորւում են դէպի Մեծ-Ջաբ գետը, որ հազարաւոր պոռոյաներ է կազմում, հպատակուելով լեռների քմահաճոյքներին:

Բուսականութիւնը չափազանց աղքատ է, որովհետև երկրի մեծ մասը քարքարոտ է և ապառաժոտ, սակայն հովիտներն այնպիսի մեծ խնամքով են մշակուած, որ ոչ մի կածան անգամ բաց չէ մնացած. ճանապարհները ձգւում են ոչ թէ գիւղի միջով, այլ կողքից, լեռների քարքարոտ լանջերով: Շատ տեղեր մի մտրաչափ լայնութեան տերրամներ են շինուած լեռների լանջերին և

ցանուած: Հացահատիկներ կամ բոլորովին չեն ցանուած և կամ չափազանց քիչ, որովհետև հողը շատ թանգ գնահատելով՝ օգտուելտ են համարում ծխախոտ, բրինձ, սիմինդր, բամբակ ցանել և պտղատու ծառեր տնկել:

Տները շինուած են լեռների լանջերին, մէկը միւսից փոքր ինչ բարձր, այնպէս որ մինի կտուրը ծառայում է միւսին իբրև բակ: Երբեմն հովիտնայնքան նեղա-նում է, որ հնարաւոր չի լինում մի քանի շարք տներ կառուցա-նել, ուստի և՛ միշարքով ձգւում են գետի ուղղութեամբ, ամեն տան առջև ունենալով մի փոքրիկ ագարակ. այսպէս է, օրինակ, Աշուտա գիւղը, որ ունի 500 տուն և ձգւում է մօտ 10 կիլոմետր երկարութեամբ:

Աշունն այստեղ սքանչելի է, մանաւանդ հոկտեմբեր ամիսը և նոյեմբերի կէսը, ձմեռը սաստիկ ցուրտ. յաճախ երկու մետրից աւելի բարձրութեան ձիւն է զալիս, և թխումում, թիարում, Բազում, ուր 35 - 40 աստիճանի թեջութիւն է տիրում, 3—4 ամիսների ընթացքում հաղորդակցութիւնը բոլորովին ընդհատուած է ոչ միայն գիւղերի մէջ, այլ և ղեկտեմբերից մինչև մարտ ամիսը նոյնիսկ միևնոյն գիւղի 100—150 քայլ հեռաւորութեան վրայ գտնուած տների միջև: Գարունն սկսւում է անձրևներով, և հազիւ մայիսին պարզում են եղանակները՝ յունիսից արդէն սաստիկ շոգը, մոծակները և տենդը այնպէս են նեղում, որ բնակիչները ստիպուած են լինում բարձրանալ հայլաները:

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ

Ասորիները շատ լաւ ըմբռնում են, որ իրենց անկախութիւնը միանգամայն պարտական են այն հանգամանքին, որ այս երկրում ճանապարհներ բոլորովին չկան: Ուշագրաւ է, որ թիարից թխում տանող կածանն ընդհատող քարաժայռը կոչւում է Հարկահանի ժայռ, և պատմւում է, որ տաճկաց հարկահանը, հարկեր նշանակելով կարողացել է զալ մինչև այդ ժայռը և աւելի առաջ չէ կարողացել գնալ, որովհետև պէտք է անցնէր ուղղահայեաց, բարձր ժայռի կրծքին ձգուող կէս մետրաչափ լայնութեան կածանով, և այս պատճառով էլ այդ ժայռի միւս կողմի բնակիչները ազատ են մնացել հարկից: Տաճկաց կառավարութիւնը ոյժ չունի ճանապարհներ շինելու, իսկ ասորիները, իրենք միանգամայն հակառակ են, որովհետև կարծում են, որ եթէ ճանապարհներ լինին՝ տաճկաց կառավարութիւնը զօրքեր, կառավարիչներ կուղարկէ այս երկիրը և կը սահմանափակէ իրենց, ասորիների ինքնավարութիւնը: Լեռների ճիւղերը միմեանց չափազանց կրտ-

բատելով, փոքրիկ հովիտներ են առաջացրել, որոնց մէջ մէկ կամ միայն մի քանի գիւղեր են տեղաւորուած, այնպէս որ գիւ-

ղից գիւղանցնելիս՝ ոչ թէ հովտի միջով պէտք է անցնել, այլ հարկաւոր է բարձրանալ լեռոը և իջնել միւս հովիտը: Լեռներն էլ մեծ մասամբ ժայռադատ են, մի քանիսն ուղղահայեաց, և որ գլխաւորն է՝ մարդկային ձեռքը այս երկրում գեռ ևս ճանապարհներ չէ շինել, և բացի սրանից՝ հովիտների հողը չափազանց զնահատուելով, ամբողջովին



Գեղի Թիար

մշակուած է և ճանապարհի համար լեռների

քարքարոտ լանջերը և գետերի անմիջական եզերքներն են թողնուած: Մեծ-Ջար գետի հովտում երբեմն ժայռերն այնպէս ուղղահայեաց են իջնում գետի մէջ, որ մարդ մեծ վտանգի է ենթարկում իրեն՝ ժայռի կրճքի նեղ կածանով անցնելու: Բաւական է մի անգղոյշ քայլ, մի սահթաքումն և մարդ կարող է գլորուել ահագին բարձրութիւնից ուղղակի Ջար գետի մէջ: Կածանները չափազանց քարքարոտ և ժայռի կրճքերը սահթակիչ լինելով, մարդիկ ստիպուած են եղել ուշիկ կոչուած ոտնամանը հնարել, ձմեռն էլ ծառի ճիւղերից հիւսուած շրջանակներ (ДЫЖИ) կապել, որ հնարաւորութիւն ունենան երկու մետրաչափ ձեան վրայով քայլել: Այս երկրում միակ գրաստը ջորին է, և այն էլ միայն այն, որ մանկութիւնից վարժուած է այս կածաններով անցնել, այս պատճառով և ամեն տարի գնում են Հալէպում, Մուսու-

լում, Երևանում և բերում, վարժեցնում այս կածաններին: Եւ յի-
րաւի՝ մարդ ապշում է, թէ այս՝ ընդհանրապէս անարգուած կեն-
դանին՝ ինչպիսի զգուշութեամբ և ճարտարութեամբ անցնում է
այնպիսի տեղերով, ուր մարդու գլուխը միանգամայն պտտուած է



Մար-Ջայայից դէպի Թխում

և լեզուն չորանում: Ընդհանուր առմամբ հազիւ կարելի է մի ժա-
մում 1—2 կիլոմետր ճանապարհ կտրել:

Սակայն մարդու այս դժոխային նեղութիւնը կարծես վայր-
կենարար անցնում է՝ երբ բարձրանալով լեռան կամ ժայռի
զագագթը՝ սկսում է դիտել իւր առջև բացուած լեռնային սքանչե-
լի տեսարանը:

ԱՍՈՐԻՆԵՐԻ ԹԻԻԸ

Տաճկաստանում պաշտօնապէս վիճակագրական տեղեկու-
թիւններ կանոնաւորապէս չեն հաւաքուում, ուստի անհնարին է
ճիշտ որոշել Վանի վիլայէթի ասորիների թիւը: Ես անձնապէս
կազմեցի Ջուլիամերիկի շրջանի, ուրիշ խօսքով՝ աշիրաթային աս-
սորիների վիճակագրութիւնը, այն էլ ոչ թէ հոգիներով հաշուած,
այլ ծխով, որովհետև զիւղերում յայտնի է միայն, թէ քանի ծուխ
կամ տուն են իրենք: Ինկատի ունեցայ նաև Վիտալ Բինէի, Մա-
եվսիու և մանաւանդ Շուկոյնիկեանի կազմած վիճակագրութիւն-
ները¹⁾:

¹⁾ Известія штаба Кавказскаго Военнаго Округа, 1904, № 3—4.

Ասորիները ապրում են գլխավորապէս Տանկաստանում, Պարսկաստանում, Ռուսաստանում, Հնդկաստանում, Զինաստանում, Ամերիկայում և ցրուած են համարեա ամեն տեղ:

Ասիական Տանկաստանում հաշուում է	863,000
Պարսկաստանում	76,000
Ռուսաստանում	2,000
Այս երեք երկրների մէջ՝ 941,000	

Այս երեք պետութեան մէջ ապրողները ըստ կրօնի բաժանում են այսպէս.

1) Նեստորականներ	135,000
2) Քաղզէա-կաթոլիկներ	23,000
3) Յակոբեաններ	125,000 1)
4) Լիվանեան կաթոլիկներ (մարոնականներ)	525,000
5) Սիրիական կաթոլիկներ	100,000
6) Քաղզէական լուսերականներ և բողոքականներ	1,000
7) Պրովասլաններ	32,000

Տանկաստանի ասորիներից միայն Վանի վիլայէթում ապրում են 79,000 հոգի, որոնք չնչին բացառութեամբ նեստորականներ են և տեղաւորուած են այսպէս.

Հաքեարի սանջակի Զուլամերիկ կազայում	41,000
» » Գեաւառ »	15,000
» » Աղբակ »	12,000
» » Օրամար »	7,000
Վանի սանջակի Շատախ »	2,000
» » Խոշար »	2,000
79,000	

Մենք գլխավորապէս կանգ ենք առնելու Զուլամերիկի կազայի ասորիներին վրայ, որոնք մեր անձնապէս կազմած վիճակագրութեամբ 4,855 տուն են, կամ մօտաւորապէս 41 հազար հոգի:

Այս ասորիները իրենց, Զուլամերիկի կազայի, բնակչութեան 95% են կազմում, Հաքեարի սանջակի 37%, իսկ Վանի վիլայէթի 17%:

1) Բացի սրանցից 80,000 յակոբեաններ էլ ապրում են Հնդկաստանում:



Ջիւտի մայիկը իւր ընտանիքով

ՄԱՐԿԱՐԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Ասորիները, ինչպէս ցոյց են տալիս մարդարանական և լեզուարանական հետազոտութիւնները, պատկանում են սեմիտական ցեղին:

Մարդարանական հետազոտութիւններ, մինչև այժմ դժբախտաբար, չափազանց քիչ են կատարուած, այն էլ շատ սակաւաթիւ անձերի վրայ: Ընդամենը չափուած են 56 գանգ, որից 22 տղամարդու և 5 կնոջ չափել է Շանարը¹⁾, 5 էրկերաբը²⁾, 11 Ի. Պանտիւխովը³⁾ և 13 Յ. Յարութիւնեանը⁴⁾:

Այս բոլորն էլ միահամուռ վկայում են, որ ասորիները իրենց ֆիզիքական կազմութեամբ տիպական սեմիտների տպաւորութիւն են թողնում: Շանարը ենթադրում է, որ ասորիները կովկասում հանդիսանում են սեմիտական ցեղի ամենամաքուր ներկայացուցիչները, որին իբրև ապացոյց, բացի սեմիտական արտաքին տիպից, ծառայում է նաև նրանց լեզուն, որ պատկանում է սեմիտական խմբի արամէական ճիւղին:

Պանտիւխովը ասորիներին համարելով հին քաղզէացիների ամենաքիչ խառնուած սերունդը, շատ նմանութիւն է գտնում Ախալցխայի հրէաների հետ⁵⁾:

Ըստ էրկերտի՝ ասորիները ունին սև մազեր, թխագոյն աչքեր, բարձր ճակատ, հաստ շրթունք, փոքր ինչ առջ ցցուած այտուկներ և տափակ ծոծրակ:

Ըստ Ի. Պանտիւխովի ասորիներն ունին սև, թեթև ալիքաւոր մազեր և խիտ ունքեր:

Ըստ Շանարի՝ ասորիներն թխադէմ են, ունին սև, ալիքաւոր և հարթ մազեր. շատերի աչքերը թուխ են, շրթունքները բարակ, բերանը բնական, 49 հազարամեար բացուածքով, ուլիղ և առողջ ատամներով:

Յարութիւնեանը այսպէս է բնորոշում ասորիներին.

Մրանց հասակը միջակից բարձր է (34,8%) աւելի հակուած դէպի բարձրահասակը (30,2%): Կուրճքը լաւ է զարգացած, և

¹⁾ E. Chantre, Recherches anthrop. dans le Caucase. T. IV. 1887 & Arch. du Museum d'Hist. Natur. de Lyon. t. VI. 1895.

²⁾ P. Фонь-Эркергъ. Антроп. измѣренія кавказскихъ народовъ. Изв. Кавказск. Отд. И. Р. Г. О. т. VIII. 1884—1885.

³⁾ И. И. Паитюховъ. Антропол. наблюденія на Кавказѣ. Зап. Кавказ. Отд. И. Р. Г. О. т. XV. 1893.

⁴⁾ A. Арутюновъ. Къ антропологии айсоровъ. Русскій Антропологическій Журналъ 1902 г. № 4.

⁵⁾ A. Арутюновъ. *յ. ք. Կր.* 103.

հասակի կիսից անցնում է: Իրանը, վերին և ներքին անդամները և սրանց զանազան մասերը չափաւոր և համաչափ են զարգացած. դէմքը—լայն չէ, նեղ այտուկներով, բաւական բարձր ճակատով. քիթը երկարութեամբ միջակ է. դէմքի երեք մասերից, այսինքն ճակատից, քթից և դէմքի ներքին երրորդ մասից, վերջինս փոքր ինչ երկար է. աչքերն ու բերանը միջակ մեծութեան են: Գլուխը բաւական մեծ է, միայն մեծացած է գլխաւորապէս ուղղահայեաց ուղղութեամբ, շնորհիւ գանգի մեծ բարձրութեան. յետևից, ընդհակառակը, կարծէք ճմուռած է, ունենալով տափակ ծոծրակ: Ասորիներից շատ շատերը (88⁰/₀) սաստիկ բրախիցեֆալ են (կարճագլուխ), ունենալով գլխի նշանացոյց միջին հաշուով 87,72: Ասորիների մեծամասնութիւնը սևորեակ է, թուխ մորթով և թխագոյն աչքերով, աւելի մութ երփով, սև, ալիքաւոր մազերով, ինչպէս գլխի, այնպէս և՛ մորուքի վրայ: Մարմինը բաւական վաղ և առատ ծածկւում է մազերով ¹⁾:

Այս տեղեկութիւնների վրայ ինձ մնում է աւելացնել, որ թխարի, թխումի և Դէզի բնակիչները ենթակայ լինելով յարատև տենդին, գեղնած են:

Կանայք ենթակայ լինելով ծանր աշխատանքի, ընդհանրապէս նիհար են և արագաշարժ: Նրանցից շատերը ունեն բաւականին նուրբ դէմքի գծեր և գեղեցիկ են:

ԱՍՈՐԻՆՆԵՐԻ ԼԵՁՈՒՆ ՍԻ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Ասորիներն այժմ խօսում են նոր ասորերէն լեզուով, որ հին սիրիական լեզուի մի բարբառն է, քերականական որոշ փոփոխութիւնները ենթարկուած և քիւրդ ու թիւրք, արաբական և պարսիկ բառերով հեղեղուած: Այս լեզուն պատկանում է սեմիտական խմբի արամէական ցեղին և շատ մեծ նմանութիւն ունի երբայերէնի հետ:

Ժամատացութիւնը դեռ մինչև այժմ էլ հին սիրիական լեզուով է կատարուում և եկեղեցական բոլոր գրքերը նոյն լեզուով են: Ժողովուրդը բոլորովին չի հասկանում այս լեզուն, ուստի շատ անգամ կարգացուած աւետարանը քահանան բացատրում է նոր ասորերէն լեզուով:

Հաքեարի բոլոր ասորիները գիտեն իրենց մայրենի լեզուն և միմեանց հետ ընդհանրապէս այդ լեզուով են խօսում: Բացի այս, շատերը խօսում են նաև քրդերէն, իսկ թուրքերէն շատ քչերը,

¹⁾ А. Арутюновъ, т. 4, стр. 100.

այն էլ Զուլամէրիկի և Բաշկալէի հետ մօտիկ յարաբերութիւն ունեցողները: Թիարուս, Թխումուս, Բազուս տիրապետուս է միայն ասորական նոր լեզուն, գրեթէ ոչ ոք չգիտէ ոչ քրդերէն և ոչ էլ թուրքերէն:

Ասորոց այժմեան զրահանութիւնը չափազանց աղքատ է, զրութիւնը դժուարին, որովհետև ամբողջ այբուբենը կազմուած է միայն 22 տառից, որոնցից միայն 4 ձայնաւոր են և այս անյարմարութիւնը հարթելու համար վաղուց ի վեր գործ են ածուսում առանձին նշաններ, ձևափոխելու տառերի հնչիւնը: Եկեղեցական գրքերի մեծագոյն մասը դեռ ևս ձեռագիր է. կան մի քանի հրատարակութիւններ Նիւ-Յօրք և Ուրմիա կատարուած: Ամբողջ Վանի վիլայէթում մի ասորական տպարան չկայ: Խմորատիպ և ձեռագիր տպարանական հրատարակութիւններ, որ հայերի մէջ եղել են և կան՝ ինչպէս Վանում, Աղթամարում, Շատահում, Մոքսում, ասորիների մէջ բոլորովին չկան: Սրանց միակ թերթը հրատարակուած է Ուրմիայում, ուր միսիօնարների շնորհիւ բացուած են մի քանի տպարաններ և տպագրուած են գրքեր:

Գրագիտութիւնը չափազանց քիչ է տարածուած, հազիւ 1 տոկոս, իսկ կանանց մէջ կարծէք միակ բացառութիւնը կազմում է մարշմոնի բոյրը՝ Սալվի-խանումը, որ անգլիական միսիօնարների շնորհիւ ստացել է շատ լաւ կրթութիւն, ազատ խօսում և գրում է անգլիերէն, ինչպէս և նոր-ասորերէն և այժմ վարում է կաթողիկոսական դիվանի գործերը, թէպէտ և առանձին դիվան, դիվանապետ, գրագիրներ չկան, ամեն ինչ կատարում է մեծ մասամբ բերանացի, կամ յանձնարարութիւններով, որովհետև նոյնիսկ մեկիքները գրագէտ չեն: Նոր-նոր միսիօնարները սկսել են բաց անել դպրոցներ:

Ուշագրաւ է որ սրանց մէջ ևս գրագէտները տիրացու են կոչուում, որովհետև ամեն մի գրագէտ հաճոյքով տիրացութիւն է անում. և տիրացու կոչումը մի տեսակ պատուանուն է կազմում: Զելուի երիտասարդ մելիքը, որ գրագէտ է, և ամեն առաւօտ երեկոյ եկեղեցում տիրացութիւն է անում, իւր հասցէն ինձ թելադրելիս ասաց. Զելուի մելիք՝ տիրացու Զիրբայիլ, և երբ ես կրկնեցի առանց տիրացու բառի, նա ինձ հպարտութեամբ նկատեց, թէ պէտք է աւելացնել տիրացու բառը, որովհետև ինքը միւս մելիքների պէս չէ, այլ գրագէտ է:

Ժողովրդական բանահիւսութիւնը մեծապէս ենթարկուած է քրդական ազդեցութեան, շատ սակաւաթիւ են ասորական ժողովրդական երգերը, որովհետև ընդհանրացած սովորութիւն է քրդերէն երգեր ասել, քրդերէն հէթիաթ պատմել:

ԱՍՈՐԻՆԵՐԻ ԿՐՈՆԸ

Վանի վիլայէթի ասորիները մեծագոյն մասը հաւատարիմ է մնացել իւր ազգային եկեղեցուն և միայն մի աննշան մասն է ընդունել կաթոլիկութիւն և բողոքականութիւն:

Ասորիներն իրենց ազգային եկեղեցին կոչում են արևելեան, իսկ օտարները՝ նեստորական:

Աւանդութեան ասելով սրանք քրիստոնէութիւն ընդունել են Պետրոս առաքեալի աշակերտ Մար-Աղայից և Մար-Մարից: Պետրոս (Միմոն) առաքեալը, որ նախ Անտիոքի պատրիարք է եղել և Սիրիայում քրիստոնէութիւն քարոզել, այս ասորիները մէջ այն աստիճանի մեծ ազդեցութիւն է ունեցել, որ սկզբից մինչև այժմ այս եկեղեցու գլուխ պատրիարքը կրում է մար շիմոն, այսինքն աէր, սուրբ Միմոն կոչումը:

Հինգերորդ դարում ասորիներն ընդունել են Կոստանդնուպոլսի պատրիարք նեստորի վարդապետութիւնը, այս պատճառով էլ այժմ սրանց կոչում են նեստորական: Շուտով այս եկեղեցու մէջ ևս պառակտումն է ընկել Նախքիտի վարդապետութեան շնորհիւ, որի քարոզիչ Յակոբ Բարազայի անունով կազմուել է Յակոբեան եկեղեցին:

VIII դարում Ս. Մարոնը Սիրիայի Լիւանում քարոզել է միաբնութականների (МОНОТЕЛИТИЗМЪ) վարդապետութիւնը, որի անունով և՛ նրա հետևողները կոչուում են մարոնականներ:

Միջին դարերում կաթոլիկ եկեղեցին չորս դար շարունակ աշխատել է միացնել ասորիներին կաթոլիկ եկեղեցու հետ, սակայն միայն 1445 թ. Սիրիայի մարոնականները միաբանել են, ընդունելով կաթոլիկութեան գլխաւոր դաւանանքները, սակայն պահել են սիրիական լեզուն և ծէսերը, իսկ 1636 թ. Կղէմէս XII պապի ժամանակ վերակոչուել Լիվանի կաթոլիկներ:

Նոյնպիսի յաջողութեամբ կաթոլիկ եկեղեցին գործել է նաև Միջագետքի նեստորականների մէջ, որոնք XVI դարի կիսից անշատուել են իրենց ազգային եկեղեցուց և կազմել քաղղէական կաթոլիկ եկեղեցին:

Յակոբեանների մէջ կաթոլիկութիւնը չի կարողացել մուտք գործել մինչև XIX դարը, սակայն սրա երեսնական թուականներին կազմուել սիրիական-կաթոլիկ եկեղեցին:

Մօտաւորապէս նոյն միջոցին սկսուել է քարոզուել նեստորականների և յակոբեանների մէջ բողոքականութիւնը, իսկ նոյն XIX դարի վերջին Պարսկաստանի նեստորականների մէջ մեծ յաջողութեամբ հիմնուեց ռուս-պրավասլաւ եկեղեցին:

Պէտք է նկատել ընդհանրապէս՝ որ այս, տարբեր կրօններին պատկանող ասորիները կիսակիրթ լինելով, ոչ միայն չեն միանում միմեանց հետ ազգային գաղափարով, այլ և միմեանց սաստիկատում են և օտար համարում:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ

Վասպուրականի ասորիները բաժանւում են երկու մեծ խմբի, ազատ լեռնականներ և ռայա-ստրուկներ: Առաջիններն ապրում են Հաքեարի լեռնային մասում, իսկ երկրորդները նոյն շրջանի գաշտային և մասամբ Վանի շրջանում: Առաջինները պահպանել են իրենց անկախութիւնը, և ազգային, ինքնուրոյն կազմակերպութիւնը, իսկ երկրորդները զրկուած իրենց ինքնուրոյն կազմակերպութիւնից, ստրկացած են բէկերի ձեռքում և կամ միանգամայն ենթարկուած տաճկական իշխանութեան:

Լեռնականները կազմում են քաղաքական և կրօնական տեսակէտից մի միութիւն, ունենալով իրենց ներկայացուցիչը յանձին մարշլմոնի, որ համարւում է սրանց թէ կրօնական և թէ քաղաքական պետը, ենթարկուած տաճկաց սուլթանի գերիշխանութեան: Ասորական այս միութիւնը դեռ մինչև այժմ էլ զրբթէ անկախ, ներքին, ինքնուրոյն կազմակերպութիւն ունի՝ ստորաբաժանուելով մի քանի տոհմի, որոնք կառավարւում են իրենց տոհմային մելիքներով և ղեկավարւում տոհմային սովորութիւններով: Տոհմերն էլ ստորաբաժանւում են օջախների կամ կարելաների, որոնցից իւրաքանչիւրը բաղկացած է մի քանի ազգակից գերդաստաններից, որոնցից աւագագոյնը և կամ հօրը վարում է տանուտիրոջ պաշտօնը:

Իբրև միութիւն ասորիներն ունեն մի ընդհանուր տերրիտորիա՝ Քոչանէս, Մեծ ու Փոքր Թիար, Թիւում, Բազ, Զիւււ և Ըշտազ, ուր բացի իրենցից հազիւ 5% քրդեր են բնակւում, որոնք, սակայն, մեծապէս ազդուած են սրանցից, գիտեն սրանց լեզուն, և ենթարկւում են ասորի մելիքներին:

Բացի ընդհանուր տերրիտորիայից, սրանք պահպանել են իրենց լեզուն, ազգային եկեղեցին, ազգային որոշ սովորութիւններ և տրադիցիաներ: Միութեան գլուխ համարւում է մարշլմոնը, որ թէ կրօնական և թէ քաղաքական պետ է համարւում: Սն է լուծում կրօնական հարցերը, տնօրինում եկեղեցական գործերը, որոշում ամուսնական խնդիրները, կատարում եպիսկոպոսների ձեռնադրութիւն և աստիճաններ տալիս: Սն է հաւաքում տաճիկ կառավարութան հասանելիք հարկերն ու յանձնում նրան, մի

որևէ ազգային ապստամբութեան կամ ինքնապաշտպանութեան միջոցին, ինչպիսին եղել է Բագիր-խան-բէյի ժամանակ, սն է ասորի կամաւորների գլուխ անցնում և ղեկավարում կռիւները, բանակցում և դաշն կապում: Սն է հաստատում ասորի մելիքների և նրանց պաշտօնանկ անում, դատում քրէական յանցանքները:

Առաջին մարշլմոն եղել է Մար Մարին, որին յաջորդել են Աբրէէս, Աբրահամ, Յակոբ և ուրիշներ՝ ընտրութեամբ, XV դարում այս աթոռը վերապահուել է Մոմմա տոհմին և մինչև 1889 թիւը մարշլմոններ ընտրուել են այս տոհմի Հորմէս գերդաստանից, իսկ այնուհետև մինչև այժմ՝ այդ գերդաստան ընդհատման պատճառով՝ Շահմիր գերդաստանից: Սովորաբար մարշլմոնի եզրօրորողներին ընտրելագոյնը ընտրւում է վարելու հօրեղբօր գերագոյն պաշտօնը:

Այս մարշլմոնների առաջին աթոռը հաստատուել է Կտեղիֆօնում (Բազդազից հարաւ, Տիգրիսի վրայ), ապա Մուսուլում՝ յատկապէս Ալիոշ գիւղում (Մուսուլից հիւսիս արևելք) և XVII դարի երկրորդ կիսից Հաքեարի սանջակի Ջուլամերկի կազայի Բոշաննէս գիւղում:

Մարշլմոնից յետոյ առաջին տեղը զբաւում է սէյմանա դըմարշլմոն (մարշլմոնի տեղակալ), որ միտրապօլիտի տիտղոսն է կրում և բնակուում է Գեաւառի Նէօյիա գիւղի մօտի Դեր վանքում: Սրանք ևս ընտրւում են միևնոյն Մար Մնանիշու (Քրիստոսի փառք) գերդաստանից, միշտ եղբօր որդին յաջորդելով իւր հօրեղբօրը:

Մետրապօլիտը համարւում է մարշլմոնի տեղակալը և նրա երկարատև հիւանդութեան և կամ թեմից բացակայած միջոցում փոխարինում է նրան: Նա մեծ դեր է խաղում մարշլմոնի ընտրութեան և մանաւանդ օժման ժամանակ. նա է բազմեցնում ընտրեալին մարշլմոնի զահը, օժում է և տալով հայրապետական գաւազան, ողջունում է նրան եկեղեցու և հօտի կողմից: Այսպիսով մետրապօլիտը, ասորիների բացատրութեամբ, դառնում է մարշլմոնի համար այն, ինչ որ Յովհաննէս Կարապետը Յիսուս Քրիստոսի ¹⁾:

Մետրապօլիտին ենթարկւում են եպիսկոպոսները, որոնց ժողովուրդը կոչում է արունա (մեր հայր), որոնք կուսակցօն են: Սրանք ևս ընտրւում են նշանաւոր գերդաստաններից և յաճախ սերնդական են: Ամբողջ Տաճկաստանում կան միայն չորս եպիսկոպոս:

¹⁾ Софокій: Историческій очеркъ несторіанізма отъ его появленія до настоящаго времени. Էր. 69—70.



Նորին Սրբազին Մարտինն Բենիամին

Սպիտկոպոսներին ենթարկում են քահանաները (կաշա), որոնք ամուսնացած են լինում և սերունդէ սերունդ յաջորդում: Սրանք ընտրում են համայնքից և ձեռնադրում եպիսկոպոսից: Հոգևորականութեան պահպանութեան համար տղամարդիկ մէկ և կանայք կէս զուրուշ տուրք և տասանորդ (մուսսէրէ) են վճարում բոլոր ցանքերից՝ հացահատիկներից և բանջարեղէնից: Բարձրագոյն հոգևորականութեան պահպանութեան համար հաւաքում է ըրշվլլտէ տարեկան տուրք, որ տեղական հոգևորականութեան տրուող տուրքին հաւասար է, նրան է պատկանում նաև ոճրագործների վրայ դրուած տուգանքները: Սրբ մարշըմոնն այցելութեան է ելնում իւր հօտին՝ ամեն գիւղ պարտաւոր է թէ խաչահամբոյր և թէ դառ, ոչխար նուէր տալ:

Լեռնական կիսանկախ ասորիները բաժանւում են հետևեալ եօթ աշիրէթների կամ տոմերի՝ Վերին Քիարի, Ներքին Քիարի, Քիւումի, Քալի, Բազի, Ջիլուի (ա. Ջարանի, բ. Ջէէրի) և Դէզի: Իւրաքանչիւր տոմ կենտրոնացած է մի որոշ երկրի վրայ, որ կրում է տոմի անունը, կազմում է մի քանի գիւղ, ունի ընդհանուր արօտատեղի, ձմերանոց, անտառ, և վարելահող. վերջինս արդէն ընդհանուր սեպհականութիւնից անցել է մասնաւոր սեպհականութեան:

Իւրաքանչիւր սերունդ ունի ինքնուրոյն, անկախ կառավարութիւն իւր ներքին գործերի վերաբերմամբ, իւր զօրապետ-դատաւոր՝ մելիքը, իւր եկեղեցին ու քահանաները:

Իւրաքանչիւր տոմ իբր նուիրական սրբութիւն համարում է իւր հիմնադիր նախահօր գերեզմանը, նրանով երդւում և յաճախ իւր հասարակական ժողովները նրա շուրջը զուսմարում:

Իւրաքանչիւր տոմ ունի իւր առանձին գերեզմանատունը, ուր բերում, թաղում են նոյն տոմի և՛ այն անդամները, որոնք օտարութեան մէջ են մեռնում:

Իւրաքանչիւր տոմի մելիքը ընտրւում է մի որոշ, հին և զօրեղ գերդաստանի անդամներից: Իսկապէս այս ընտրութիւնը կատարւում է միայն ձևապէս, մելիքի մահուան պատճառով հաւաքուած ամբողջ իւր հաւանութիւնն է տալիս սովորաբար մելիքի աւագ որդուն, երբեմն էլ եղբօրը և սա մի ընծայով ներկայանում է մարշըմոնին և նրանից մի խալաթ ստանալով հաստատում մելիքական պաշտօնի մէջ:

Մելիքը կարգ է պահում երկրի մէջ, կամաւորների զուլին անցած պաշտպանում է իւր տոմը շրջակայ ասորի միւս տոմերի և քրդերի յարձակումներից և կամ ինքը յաճակումներ գործում,



Նորին Սրբուրբին Մարտիրոսն Ռենիամին

ստանում է տանուտէրերից նրանց հաւաքած հարկերը և տանում յանձնում մարշմոնին, վարում քաղաքացիական դատերը, իսկ քրէականների վերաբերմամբ դիմում մարշմոնին:

Տոմարը բաժանւում են սերունդների կամ օջախների և կամ կարիւանների: Այսպէս Վերին թիարի տոմար բաժանուած է հինգ սերնդի՝ Բենիմաթա, Լաքիփա, Ռունթա, Ղալայաթա և Բիալաթա: Ներքին թիարը 6 սերնդի՝ Բինեմաթա (Կիզան գիւղում), Լագիպտա (Աշութա գիւղում), Սալաբաք, Բիրաուլէ, Մինանիշ և Ջաւիթա համանուն գիւղերում:

Իւրաքանչիւր սերունդ համարում է իրեն միենոյն նախահօրից սերած, տիրապետում է միենոյն հողաբաժնին, ունի ընդհանուր գերեզմանատուն և ներքին գործերը վարում է հասարակական կամ ծերերի ժողովներով, որին նախադահում է տանուտէրը:

Սովորաբար տանուտէրը ընտրւում է նշանաւոր, հին և զօրեղ գերդաստանից և հաստատւում նոյն տոհմի մելիքից, որից միանգամայն կախուած է մնում, Սն է գանձում հարկերը և յանձնում մելիքին, սն է հաւաքում կամաւորներ և առաջնորդում մելիքի մօտ՝ կռուի գնալու, սն է վարում դատերը, ծանր յանցանքների համար դիմելով մելիքին:

ԱՍՈՐԻՆԵՐԻ ԲՆԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Որպէս հին ասորիների ժառանգներ, այս ասորիները ժառանգել են պատերազմական ոգին, երկիրն էլ լեռնային և թշնամի քիւրզ ժողովրդով շրջապատուած լինելով, մեծապէս նպաստել է այդ ոգու զարգացման: Ասորի երեխայի անուրջը լաւ մարտիկ դառնալն է, նրա սիրած խաղալիքը՝ աղեղը, որով թռչուններ է որսում: Թէ չափահասների և թէ երիտասարդների զօղում խըրուած է լինում կեռ դաշոյնը, զարդարուն, արծաթապատ երախակալով. նոր ձևի հրացաններ համարեա ամեն տան մէջ մի քանի հատ կարելի է գտնել:

Ասորիներն ընդհանրապէս անկիրթ են, անգրագէտ, մանաւանդ թիւումի բնակիչները. սրանք չունին և ոչ մի դպրոց. վերջերս անգլիական և կաթոլիկ միսիօնարները բացել են մի քանի դպրոց, սակայն սրանք ևս դեռ անուանական են: Նոյն իսկ մելիքները անգրագէտ են և բացի իրենց մայրենի լեզուից՝ թուրքերէն անգամ չգիտեն: Քահանաներից շատ քչերը հասկանում են իրենց կարգացած աւետարանը: Տգիտութեան հետ կոպտութիւնը,



Քոչանի, Ասորոց կարուղիկոսանիս գիւղը

իշխանութեան չհնազանդուելու, կեղեքելու, կողոպտելու Ինստիտուտները շատ զարգացած են:

Կրօնական ոգին բաւական վառ է, սակայն վերջերս միսիօնարներէի գործունէութիւնը ձգել է կրօնի նշանակութիւնը և նրան դարձրել փող վաստակելու միջոց: Շատերը ընդունել են և ընդունում են կաթոլիկութիւն՝ գրաւուած իրենց առաջարկած փայլուն ոսկիներէից, սակայն հէնց որ դադարում են իրենց սիրաշահել, վերադառնում են հին հաւատին և կամ մի ուրիշ հաւատ ընդունում, այնպէս որ միսիօնարական գործունէութիւնը համարձակ կերպով կարելի է ընդունել ժողովրդի անկրօնութեան և բարոյական անկման պատճառ:

Յիշեմ գոնէ մի դէպք.— Ինձ հիւրընկալող Ջելուի մելիքը և նրա աներ քահանան դառնացած պատմում էին, թէ Վանի կաթոլիկ եպիսկոպոսը այցելել է Ջելուի գիւղերը և 40 հոգու կաթոլիկ դարձնելով քահանայ ձեռնադրել և ամսական մի ոսկի թոշակ նշանակել, ստիպելով, որ սրանք աշխատեն տարածել կաթոլիկութիւնը: Այս հանգամանքը բաւական մեծ խռովութիւններէ պատճառ է եղել, շատ հայրեր դուրս են վճռել իրենց զաւակներին իրենց գերդաստանից, որովհետև սրանք ընդունել են կաթոլիկութիւն՝ գրաւուած իրենց խոստացուած ոսկիներէից, որը, սակայն չստանալով, նորից վերադարձել են իրենց մայրենի եկեղեցու գիրկը: Նոյն իսկ այդ քահանաները վերջին տարիս ոռճիկ չեն ստացել, ուստի և մի քանիսը կրկին նեստորական են դարձել, մի քանիսն էլ՝ բողոքական: Մըբ ես եկայ Դիզա աւանը, այցելեցի այնտեղի կաթոլիկ գործակալին՝ յանձնարարական ունենալով Վանի կաթոլիկ եպիսկոպոսից՝ ինձ տեղեկութիւններ տալու: Սենեակը լիքն էր ասորիներով: Քահանան, որ բաւական կրթուած մի ասորի է և վարժ խօսում է ֆրանսերէն, ոգևորութեամբ պատմեց ինձ, թէ ինչպիսի արագութեամբ կաթոլիկութիւնը տարածում է ասորիների մէջ և ի միջի այլոց մատնացոյց արաւ Ջելուի մելիքի և նրա աներ քահանայի վրայ, որ նոյնպէս ներկայ էին, որպէս ջերմեռանդ կաթոլիկներէի:

— Միթէ դուք էլ կաթոլիկութիւն էք ընդունել, հարցրի ես դարմացած՝ Ջելուի մելիքին և քահանային:

— Այո, մենք էլ փրկուածներէից ենք, պատասխանեցին նրանք:

Սակայն յետոյ զալով իմ իջևանը, այդ նեստորական կրօնի նախանձախնդիր մելիքն ու քահանան յայտնեցին ինձ, թէ իրենք միայն երեսանց կաթոլիկ են, որ շատ չի անցնիլ, գործակալի ոսկիները կը հատնեն, իրենք կրկին նեստորական կը դառնան:

Մեզ փող է պէտք, փող, աւելացրին նրանք, կրօնը փող չի կըշտացնիլ:

Մի կէտ ևս, որի վերաբերմամբ անուշադիր չի կարելի լինիլ,—այդ խաչագողութիւնն է, որ սաստիկ տարածուած է մասնաւանդ Ջելուի մելիքութեան մէջ: Բազմաթիւ ճարպիկ ասորիներ շրջում են Ռուսաստան և եւրոպական այլ պետութիւններ՝ իբր Երուսաղէմի կամ մի այլ սրբավայրի միաբան և ժողովարարութիւն անում, սրբոց մասուքներ ման ածում: Այս արհեստով պարագողները չափազանց աչքաբաց են և միբանի լեզուներ զիտեն: Եւ տեսայ մինը՝ որ ազատ խօսում էր ֆրանսերէն, իտալերէն և սպաներէն և որ երկար տարիներ թափառել էր այս երկրներում իբր Երուսաղէմի կաթողիկ միաբան: Մար-Սարաում Աշութա գիւղի քահանան, մտածելով ինձ հաճոյք պատճառել, ուսերէն լեզուով օրհնեց սեղանը և վերջը խոստովանեց, որ երկար ժամանակ շրջել է Ռուսաստանում իբր Երուսաղէմի միաբան:

ԱՍՈՐԻՆԵՐԻ ՊԱՐԱՊՄՈՒՆՔԸ

Ջուլիաներիկի շրջանի ասորիները գլխաւորապէս պարագում են այգեգործութեամբ, գինեգործութեամբ, մեղուապահութեամբ, խաչնարածութեամբ, և մասամբ երկրագործութեամբ: Պողատու ծառերի մէջ առաջին տեղը բռնում է ընկուզենին, ապա խընձորենին, տանձենին, կեռասենին, թթենին, դեղձենին և նռնենին: Այս բոլոր տեսակի ծառերին փաթաթուելով բարձրանում է խաղողի որթը, ծառի ճիւղերի և պտուղների միջից քաշ անելով իւր ողկոյզները: Այսպէս են աճում խաղողի որթերը, որպէսզի առանձին տեղ չբռնեն:

Գինեգործութիւնն առանձնապէս զարգացած չէ, պատրաստուած գինին չի արտահանուում, այլ սպառուում է հէնց իւր տեղում:

Մեղուապահութիւնը դեռ ևս կատարուում է հին սիստեմով և ոչ Դադանի: Մեղրը շատ մաքուր է և քաղցր ու մեծ հաշակ ունի, մասնաւանդ Քոչանիսինը:

Պաշնարածութիւնը սաստիկ տարածուած է. պահում են մեծ քանակութեամբ ոչխար և շատ քիչ այծ:

Ընտանի կենդանիներից պատահում են շատ քիչ քանակութեամբ կով, ամեն մի գիւղում 2—3 հատ եզ, ոչ մի ձի, սակաւաթիւ էջ և բաւականաչափ շորիներ:

Տեղի սակաւութեան պատճառով տնային թռչուններ անգամ

չեն պահում, որովհետև կարող են անմիջապէս տան առջև տարածուող ցանքսերը և պարտէզները փչացնել:

Ծանուցում են գլխաւորապէս սիմֆոնոր, ծխախոտ, բրինձ, կանեփ և անխոն, նաև շատ քիչ քանակութեամբ ցորեն, կորեկ, կարտոֆիլ և կաղամբ: Ծնորհիւ այն հանգամանքի, որ չափազանց մեծ խնամքով են մշակում երկիրը՝ բերքը լինում է մէկին հինգ հարիւր, նոյն իսկ հազար:

Զմեռը գիւղերում վատակի ոչ մի գործ չլինելու պատճառով, աշնան վերջին, երբ դեռ ևս ճանապարհները չեն փակուել, գրեթէ բոլոր տղամարդիկ գնում են Մուսուլ, Հալէպ, Ռուսաստան՝ աշխատելու և դարձան սկզբին վերադառնում են իրենց ազարակները մշակելու: Մուսուլում գլխաւորապէս պարապում են կողովագործութեամբ և շատերը սեպհական ազարակներ ունեն ուսնիններով ծածկուած: Միւս տեղերում սրանք գլխաւորապէս պարապում են բեռնակրութեամբ, մանր առևտրով և մասամբ խաչագողութեամբ:

Գեաւառի և Աղբակի շրջանի ասորիները պարապում են գլխաւորապէս երկրագործութեամբ. ցանում են ցորեն և կանեփ:

ԱՍՈՐԻ ՄԵԼԻՔՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ *)

ա. Զելուի Զարանիշի մելիքութիւն

Աւանդաբար պատմում է, թէ Նաբուգոդոնոսորի ցեղից Մանդու անունով մինը Արթուր բաղաքից անյայտ պատճառներով դուրս է եկել և իւր Բարութա, Յիսուէփ, Բաքոս և Իսսի չորս եղբայրների հետ սկսել է բայլել, ուխտ դնելով, որ վերահաստատուի այնտեղ, ուր նրա առջև ոչխարի գլուխ և ոտներ կը դնեն: Երկար շրջելուց յետոյ Մանուն եկել է Փաշու գիւղը, ուր մի աղքատ մարդ հիւրասիրել է նրան ոչխարի ոտ ու գլխից պատրաստուած կերակրով: Մանուն տեսնելով որ իւր առաջ դրուած է ոչխարի ոտն ու գլուխը, ասել է, թէ իմ ուխտս կատարուած է, Աստուածային կամքով ես պէտք է այստեղ մնամ՝ այս գիւղի գլուխը դառնալու: Այս ընտրել է իւր բնակութեան համար մի յարմար տեղ այդ գիւղի հանդէպ, այժմեան Զարա-

*) Կարեւր եմ համարում յիշատակել, որ մելիքների պատմութեան մասին զբաււր ոչ մի աղբիւրից չկարողացայ օգտուել, որովհետև շատ որոնեցի. բայց չգտայ. ներկայ մարշալմանի և Քոչանիսի միսիօմարների ասելով այս մասին դեռ ևս ոչինչ չէ գրուած: Այս բոլոր տեղեկութիւնները հաւաքել եմ մեղքանիտ գիւղերում իմ խնդրով համախմբուած ծերունիներից:



Մեկի գառավորներ

նիշում և կառուցել տուն: Մի օր Մանդուն անտառում ման գալիս տեսել է քառասուն թռչուն, որ դուրս են եկել մի ինչ որ տեղից. որոնել է և տեսել մի սև քար և մօտը մի մեծ եկեղեցի, որի դուռը փակ է եղել: Նոյն գիշերը երազում տեսել է, որ այդ եկեղեցու բանալին և մի բուրվառ մօտակայ սև քարի տակը թաղուած է: Առաւօտեան զնացել հանել է, բացել եկեղեցին և մըտել ներս՝ աղօթել. այդ օրուանից այս եկեղեցին դարձել է այս աշխարթի համար ամենամեծ ուխտատեղի: Մի օր էլ ման գալիս տեսել է մի մեծ այր, լի մարդկանց մեծ-մեծ կմախքներով. հարց ու փորձ է արել և իմացել, որ պարսիկների հալածանքից մարդիկ փախել, ապաստանել են այս այրում, սակայն նրանք եկել են և դռան առջև խարոյկ վառել ու ծխով խեղդել բոլորին:

Այս նորաշէն գիւղի շրջակայքում ապրելիս են եղել կռապաշտ, մարդակեր մարդիկ, և Մանդուն նրանց քրիստոնեայ է դարձրել, իսկ որոնք չեն կամեցել դառնալ՝ կոտորել է: Չորս զօրեղ տուն չեն կամեցել քրիստոնէութիւն ընդունել, Մանդուն էլ չկարողանալով բոլորին կոտորել, ստիպել է որ ամեն մի տունը շրջակայ մի գիւղ զնայ բնակուի: Նրանք էլ զնացել են, և՛ մինչև այսօր էլ սրանց սերունդները կան, միայն շատ չեն աճել, դարձեալ մի-մի տուն են կազմում:

Այս մեկը Մանդունին յաջորդել են ուրիշ մեկիցներ, որոնք նոյնպէս մեկը Մանդուն են կոչուել: Սրանցից մինի ժամանակ ասորիների մարշլմոնը Աթուրից փախել, եկել է Ալկուշ (Մուսուլի մօտ), սակայն պարսիկներն այս կողմերին տիրել են և մարշլմոնին տարել Պարսկաստան, և թոյլ տուել ապրելու Շիննու գիւղում: Մարշլմոնը այստեղ հաստատուելով մի մեծ եկեղեցի է կառուցել: Մի առժամանակից յետոյ մեկը Մանդուն զընացել ազատել է մարշլմոնին գերութիւնից և բերել Ջարանիշ: Այս ժամանակից սկսած վաթսուն տարի շարունակ մարշլմոններն այս գիւղումն են բնակուել, և սրանցից մինի գերեզմանն էլ այժմ ցոյց է տրուում այս գիւղում: Յայանի չէ թէ ինչ պատճառներով մարշլմոնը տեղափոխուել է Թրդկունիս գիւղը և ապա Քոչանիս, նուէր ստանալով մեկը Մանուից: Սակայն մարշլմոնը Քոչանիսում ևս երկար չի մնացել, որովհետև մօտ լինելով Ջուլամէրիկին, շարունակ ենթարկուել է այդտեղ նստող միբի հալածանքներին, ուստի և՛ տեղափոխուել է Դէզ: Մեկը Մանուն գտնուելով լինելով, որ մարշլմոնը հեռացել է իւր նուիրած Քոչանիսից, զնացել է Ջուլամիրիկի միբի մօտ և նրա հետ խորհրդակցելով թէ ինչ միջոցով կարելի է մարշլմոնին կրկին Քոչանիս դարձնել, զնացել է Դէզ և կրակ տուել, այրել մարշլմոնի տունը,

ապա ժողովարարութիւն արել ու Քոչանիսում կաթուղիկոսարան կառուցել, հրաւիրելով մարշլմոնին վերադառնալ Քոչանիս, որ և ստիպուած յանձն է առնում:

Մելիք Մանդուին յաջորդել է մելիք Հարօն: Սա յարձակուել է Գեաւառի Խարուատի բերդի վրայ, տիրել, աւերել և մեծ աւար առնելով քրդերից՝ վերադարձել:

Սրա յաջորդը ևս կոչուել է մելիք Մանդու: Սա ևս իւր նախորդի նման պատերազմաւէր է եղել և երբ փոքրիկ զփզփոթիւն է ծագել սրա և մելիք Խուրեարի միջև, սա յարձակուել է Բազի վրայ, կոտորել, վառել և մեծ աւար առել:

Մելիք Մանուին յաջորդել է մելիք Սուլէյման: Սրա ժամանակ օսմանեան կառավարութիւնն ուշադրութիւն է դարձրել այս կողմերի վարչական կազմակերպութեան վրայ, զաւառապետներ է նշանակել Ջուլամերիկի, Գեաւառի, Եամղղիւնի վրայ, որոնք ամեն կերպ աշխատել են թոյլ չտալ, որ աշիրէթները միջև կռիւնք ծագեն: Այս պատճառով և՛ թէ մելիք Սուլէյմանը և թէ սրա յաջորդ մելիք Ելիմոնը յիշատակելի առանձին մի գործ չեն կատարել և խաղաղութեամբ կառավարել են իրենց աշիրէթը:

Ելիմոնի յաջորդ մելիք Վարդայի մասին պատմում է, թէ կաշատուել է Օրամարի քիւրդ աշիրաթի ազայից՝ չպաշտպանելու իւր աշիրաթը, երբ ինքը կը յարձակուի սրա վրայ, և երբ քրդերը եկել, կոտորել, քշել տարել են այս աշիրաթի հօտերը՝ մելիք Ելիմոնը տեղում հանդիստ նստած է մնացել:

Սրա յաջորդ մելիք-Իշուն յարձակուել է Թխումի ասորի աշիրէթի վրայ և մօտ 2000 զուլս ոչխար աւար տարել: Այս միջոցներին Դէզի ասորի աշիրաթն էլ մտել է սրա երկիրը և սրան պատկանող Ղարսու կոչուած տեղը ցանել, և սրա արօտատեղիներում իւր հօտերն արածացրել: Մելիք Իշուն յարձակուել է Դէզի աշիրէթի վրայ, նրա հօտերը աւար առել և Ղարսուում ցանած արտերն էլ գրաւել և ինքը հնձել տուել:

Մելիք Իշուին, յաջորդել է մելիք Միրզան, որի գործունէութեան մասին ոչ մի յիշատակութիւն չէ մնացել: Սրա յաջորդ մելիք Խալիլի ժամանակ Օրամարի քուրդ աշիրէթը յարձակուել է այս շէրուի աշիրէթի վրայ և մօտ երկու հազար ոչխար քշել տարել: Մելիք Խալիլ բողոքելով հանդերձ օսմանեան կառավարութեան, 500 ասորի կարիճներով և 40 օսմանեան զինուորներով գնացել է Օրամար՝ և ստիպել վճարելու 200 լիրա դրամ, 682 ոչխար, 7 շորի, 4 կով, մի քանի գորգ և այլն:

Սրանից յետոյ 1909 թուին նա գնացել է Եւրոպա, ժողովարարութիւն անելու, ներկայացել է Հոռոմի պապին իբր Զելուի Քազաւոր՝ իւր ազգային շորերով և նկարագրելով երկրում տիրող տգիտութիւնը՝ կոնդակ է խնդրել՝ ժողովարարութիւն անել դպրոցներ հիմնելու: Պապը թոյլ է տուել և նա կարճ միջոցում հաւաքել է 18000 բուրլի, վերադարձել գիւղ, դպրոցական մի շէնքի հիմք ձգել և կրկին վերադարձել Եւրոպա՝ ժողովարարութիւնը շարունակելու: Ըստ երևոյթիւն այս անգամ Գերմանիայում նա իբր կաթոլիկ վարդապետ է հանդիսացել, որովհետև, ինչպէս իմացոյ գերմանական փոխ-հիւպատոսից, գերմանական կառավարութիւնը ձերբակալել է նրան իբր խաչագողի և տեղեկութիւններ է ուզել հիւպատոսից:

Այժմ մելիքութեան պաշտօնը մելիք Խալիլի բացակայութեան պատճառով վարում է մելիք Զիրբայէլը, մի գրագէտ անձնաւորութիւն, որ գիտէ նաև թուրքերէն խօսել և պարծենում է, որ գիտէ ժամասացութիւն և սարկաւազի աստիճան ունի:


բ. Զիրի մելիքութիւն

Զիրի աշիրաթի նախահայր համարում է մելիք Զամօն, որ իւր եղբայր Բերիջի և իւր աղջի հետ Բոտանի Տօրնահերայից եկել բնակութիւն է հաստատել Քալանի գիւղում, հալածելով բըրգերին: Սրան յաջորդել են շատ մելիքներ, որոնցից մինը ինամացել է Զիրի գիւղի մի ազգեցիկ տան հետ, տալով նրան իւր աղջիկը: Անն այս տանից դուրս է եկել Հարօն անունով մի քաջ մարդ, որ ստորագրել է իրեն Քալանի գիւղը և խլել մելիքութեան իրաւունքը: Այնուհետև մելիքութիւն են արել սրա որդին՝ մելիք Գէորգիս և ապա թոռը՝ մելիք Համօն, որ ոչ մի նշանաւոր բանով յայտնի չեն:

գ. Վերին Թիարի մելիքութիւն

Վերին Թիարի աշիրաթի առաջին մելիք համարում է Մելիք-Որմըզը: Սրա ժամանակ Զուլամերիկի խան Քարիմ-խանը Սուրան-բարան քրդական աշիրաթի գլուխն անցած կոտորել է Վերին Թիարի ասորիներին:

Մելիք-Որմըզը միջանի անձերի հետ փախել, ապաստանել է Սմաղար լեռան գագաթը, որտեղից քսան օր շարունակ կռուել է Քարիմ-խանի մարդկանց դէմ: Երբ Քարիմ խանը երկիրն անպատ դարձնելուց յետոյ՝ քաշուել է իւր տեղը, մելիք-Որմըզը



Մելիքի ընդունելությունը

իջել է լերան գագաթից, հաւաքել իւր շուրջը սրի բերանից ազատուած, ցիրուցան եղած ասորիներին, տեղաւորել Ճամպա գիւղում և կառավարել նրանց մինչև իւր մահը: Նրա գերեզմանը այժմ էլ ցոյց են տալիս Ճամպա գիւղում: Ամեն տարի, զատիկին, Ճամպա գիւղի բոլոր բնակիչները հաւաքուում են այս, իրենց համար նուիրական գերեզմանի շուրջը և օրհնել տալիս: Սրա մօտ թաղուած են նաև յետագայ մեկեքները:

Մեկեք-Որմըզի յաջորդներից հետևեալ երեքի մասին, այսինքն՝ Կեանև, Բենիամի, Ծաւան, ոչ մի ուշագրաւ բան չի պատմուում, իսկ Սմայիլի մասին վառ յիշողութիւններ կան: Սրա ժամանակ ասորիները երկրները սկսել են դարձեալ աւերուել քիւրդ՝ այս անգամ Բաղիւր-խան-բէյի հրոսակային արշաւանքներից: Մեկեք-Սմայիլը երեք օր շարունակ արիարար կռուել է Բաղիւր-խան-բէյի դէմ և ապա թեթև վէրք ստանալով՝ ապաստանել է մի անմատչելի լեռ: Բաղիւր-խան-բէյ երդումն տալով որ ոչ մի ֆուսս չի հասցնիլ նրան, համոզուում է իջնել Դէրա Մարսաւա գիւղը՝ բանակացելու Սմայիլը իջնում է, և այստեղից, մի աղբիւրի մօտ նստած, այս մեկեքը և Բաղիւր-խան-բէյը երկար խօսում են: Վերջը Բաղիւր-խան-բէյը առաջարկում է մեկեք-Սմայիլին ընդունել մահմեդականութիւն, խոստանալով նրան տալ ամեն ինչ՝ ինչ որ ցանկանայ: Մեկեք-Սմայիլը վրդովուում է և պատասխանում, թէ դու ընդունիր քրիստոնէութիւն, ես կըտամ քեզ, ինչ որ ցանկանաս: Այս լսելով Բաղիւր-խան-բէյը աչքով է անում իւր ծառաներին և սրանք անմիջապէս խփում, սպանում են մեկեքին:

Այս նահատակ մեկեքին յաջորդել են Բենիամի, Փըթիւ, Զնդու, Ծաղուք, որոնց մասին դարձեալ չկան յիշողութիւններ: Վերջին մեկեքը այժմեան մեկեք-Իսրայէլն է, որ գրագէտ է և բարեկիրթ անձնաւորութիւն: (Տես մեկեքի ընդունելութիւն պատկերը. ժողովուրդը զինուած ընդ առաջ դալով նրա ոտների առջև ոչխար է զոհում):

դ. Ներքին Թիարի մեկեքութիւն

Այս աշիրաթի առաջին մեկեք համարուում է մեկեք-Աւդիշը, որ Զուլամերիկի միւր Իբրահիմ խանի հետ միացած մի բանի անգամ յարձակուել է Պարսից երկրի վրայ և աւարել: Իբրահիմ-խանը այս յաղթութիւններից յետոյ գնացել Կոստանդնուպօլիս և սուլթանից դրամ կտրելու արտօնութիւն է ձեռք բերել, խոստանալով Զուլամերիկի շրջանում հանապարհներ շինել, որ և մասամբ կատարել է:

Մելիք Աւդիշի գերեզմանը գտնուած է Սալաբաք գիւղում, ամեն տարի, գաստի երկրորդ, մեռելոցի, օրը թէ մելիքի և թէ գիւղացիների աներից կերակուրներ են բերուած և դրուած այս գերեզմանի վրայ, զալիս են քահանաներ և օրհնուած նախ այս և ապա միւս մելիքների գերեզմանները. յետոյ թէ մելիքը և թէ գիւղացիները նստում են այս գերեզմանների շուրջը և ուտում բերած կերակուրները: Մելիք Աւդիշի գերեզմանով երդուելը այժմ էլ շատ սովորական է:

Մելիք Աւդիշից յետոյ մելիք է դարձել մելիք Բարխոն: Սրա ժամանակ Բոտանի Ջեզիր գաւառի միջը յարձակուել է Ջուլամիրի կի վրայ և յազթել, ուստի և մելիք Բարխոն միացել է Բէյտուլջաբարի Գիրաւի Արտուշ աշիրաթի ադա Շաքրի հետ և օգնութեան հասնելով Ջուլամիրի կի միւրին՝ յարձակուել Ջեզիրի միւրի վրայ, և դուրս բշել նրան Ջուլամիրի կի սահմաններից:



Ներքին Թիւումի մելիք Բարխո

Սրան յաջորդել է մելիք-Աւդիշ Բ., որ խաղաղութեամբ կառավարել է իւր երկիրը: Սրա գերեզմանը ևս այժմ ցոյց է տրուում միևնոյն Սալաբաք գիւղում:

Սրա յաջորդ մելիք-Բարխոն նորից վերսկսել է ասպատակութիւններ կազմակերպել, յարձակուել է Բարուարի միւրի վրայ, աւերել Ղումրի բերդը և մեծ աւար բերել:

Այս ասպատակութիւններից յետոյ ժողովուրդը բերուած աւարով լիացած՝ միառժամանակ խաղաղ է մնացել և այս միջոցին

մեկը Մեալիք-Դանիէլը ներքին բարեկարգութիւններով է զրադուել և շինել է մի քանի ճանապարհներ:

Մեկը Դանիէլին յաջորդել է մեկը Բարխօն: Սրա ժամանակ Չալի քուրդ աշիրաթը յարձակուել է սրա երկրի վրայ և քշել, տարել է սրանց հօտերը: Մեկը Բարխօն ընկել է սրանց յետևից, փախցրել և յետ բերել իրենց հօտերը: Մնթարկուելով կաթոլիկ միսիօնարների ազդեցութեան, մեկը Բարխօն ընդունել է կաթոլիկութիւն, ուստի և՛ մարշըմոնի կողմից զահընկեց է եղել և նրա փոխարէն մեկը է հաստատուել մեկը-Կեաթօն, որ այժմ կառավարում է:

Ե. Թխումի մելիքութիւն

Այս մելիքութեան նախահայր համարում է մեալիք Շիրինշահը, որ մի խումբ ասորիների հետ Աթուրից եկել է Թխում և այստեղ, անտառի մէջ տեմնելով այժմեան եկեղեցին ամայի կանգնած, բնակութիւն է հաստատել շուրջը և կազմակերպուելով սկսել է կռուել այս կողմերը տիրող եղիզիների դէմ:

Մեկը-Շիրինշահին յաջորդել է Մեկը Մանուն: Սրա ժամանակ Արաիւշ աշիրաթի քրդերը յարձակուել են Պան գիւղի և սրա շրջակայքի եղիզիների վրայ, կոտորել և դուրս քշելով տիրել նրանց երկրին: Ապա ուզեցել են նաև ասորիներին կոտորել, որ նոր հաստատուել էին այս կողմերում, սակայն մեկը-Մանուն ընդդիմացել է և պահպանել իւր ժողովուրդը:

Մեկը-Մանունին յաջորդել է մեկը Օրահան: Սա միացել է Ջուլամէրիկի միւր Միրոս Մատէնի հետ և յարձակուել Բաղինի (Մօսուլի մօտ) քրդերի վրայ, կոտորել և թալանել. ապա դարձեալ նոյն միւրի հետ յարձակուել է Պարսկաստանի Բարդասորի քրդերի վրայ և նրանց էլ կոտորել ու թալանել:

Մեկը Օրահանին յաջորդել է մեկը Լաչինը, որ յետ է մըղել Չալի քրդերի ադա՝ Միրզա-ադայի յարձակումը և կոտորել նրանց՝ Չաբ գետի ափին:

Սրան յաջորդել է մեկը Դինխանը, որ 3000 զօրքով յարձակուել է Պան գիւղի Արտուշ աշիրաթի քրդերի վրայ և կոտորել, թալանել է:

Սրա յաջորդ Լաչինը միևնոյն շաւղով է գնացել: Պարձեալ յարձակուել է Արտուշի աշիրաթի քրդերի վրայ, սակայն պարտութիւն է կրել:

Սրան յաջորդել է մեկը Դեօրգին, որ այժմ կենդանի է: Հետեւելով իւր նախորդներին, սա յարձակուել է Բարվարի Ար-

առիւշ աշիրաթի քրդերի վրայ և քշել բերել նրանց ահազին հօտերը: Պրախուսուած այս յաղթութեամբ, նա յարձակուել է Օրամարի Սիւթու աղայի վրայ, որ եկել, քշել տարել էր այս աշի-



Թխոււմի մելիքը իւր օխախմբով

րաթի 2000 զուլա ոչխարները և կարողացել է գրեթէ նոյնքան ոչխար քրդերից քշել բերել:

Այս մելիքական հարստութիւնը այժմ հինգ գրեթէ համազօր օջախի, գերդաստանի է բաժանուած, ուստի և՛ որոշել են որ մելիքութիւնը ժառանգական չլինի, այլ իւրաքանչիւր երեք տարին հերթով ընարուի այս հինգ օջախի արժանաւոր մարդկանցից:

գ. Բազի մելիքութիւն

Բազի աշիրաթի մասին պատմուած է, թէ Աթուր քաղաքից փախել, եկել են Արտուշի Շիվախալէ գիւղը, ուր մի քանի դար մնալուց յետ քրդերի հալածանքից ստիպուած տեղափոխուել են այժմեան բնակավայրը, որ նրանց անունն է կրում: Ամենահին մելիքը, որի մասին դեռ ևս պահպանուել է յիշատակութիւն, մելիք Եւնանն է, որ յետ է մղել Փիղանի միր Մստաֆա-բէկի յարձակումը Բազի վրայ:

Մեկէք Եւնանից յետոյ յիշուամ է մեկէք Գարեաւուշը, որ կրճատուած ձևով Գարուիշ է կոչուել: Սն կրիւ է մղել Մուսուլի Մուզուլ բրդական աշիրաթի դէմ, որ կամեցել է տիրապետել այս կողմերին և դուրս քշելով նրան այստեղից միահեծան կառավարել է:

Մրան յաջորդել է մեկէք Որըը (Յոր), որ կառուցել է Բազի եկեղեցին:

Մրա յաջորդ Գանուն մեկէքը յետ է մղել Ջուլամէրիկի միր Ռաշիդ-փաշայի յարձակումը և սպանել նրան պատերազմի դաշտում:

Այս յաղթութիւնից յետոյ Ջուլամէրիկի նորընտիր միր Աբդուլլահ-բէկը բարեկամացել է սրա յաջորդ մեկէք Սողոմոնի հետ և միասին յարձակուել են Բոտանի Ջիզիբ քուրդ աշիրաթի վրայ և մեծ կոտորած տուել, սակայն այս կուռմն էլ մեկէք Սողոմոնն է սպանուել:

Մրան յաջորդել է թէպէտ նոյն, Եւնան, մեկէքական տընից, բայց Շաուտա զիւղից մեկէք Շահէն, որի ամենագլխաւոր գործը այն է եղել, որ կարողացել է յետ մղել Փինիանիշ բրդական աշիրաթի յարձակումը:

Մրան յաջորդել է մեկէք-Եւնան Բ.-ը: Պէտք է ասել, որ մեկէքները, որպէս տանկանպատակ, մի փոքրիկ հարկ են վճարելիս եղել Ջուլամերիկի միրին, սակայն մեկէք-Եւնան 8 տարի շարունակ հարկ չէ տուել, և միանգամայն ինքնազուլս կառավարել է իւր ժողովուրդը, սակայն յետոյ Ջուլամերիկի միր Նուրի-բէկը տեսակցութիւն է նշանակել Քոյ զիւղում և համոզել է զուր արեւնհեղութիւնների տեղիք չտալ և վճարել հարկ. սա էլ յանձն է ասել:

Մրա յաջորդ մեկէք Ղաւշարան միայն 9 օր մեկէքութիւն է արել, զահընկեց լինելով Ջուլամերիկի միրից, որ 9 ջորի էլ տուգանք է առել, նրա ցոյց տուած անհնազանդութեան համար:

Մրան յաջորդել է մեկէք Շահէ Բ.: Մրա ժամանակ մի ձմեռ, երբ Բազի տղամարդիկ, սովորութեան համեմատ, պանդխտած են լինում Մուսուլի կողմերը աշխատելու՝ Փինիամիշ, Օրամար և այլ բրդական աշիրէթներ յարձակուել են այս Բազի վրայ և աւերել ու կողոպտել են: Գարնանը, երբ պանդխտանքը վերադարձել են, մեկէք Շահէն կազմել է մի մեծ գունդ, յարձակուել այս քըրդերի վրայ, 80 մարդ սպանել և ահագին աւար խլել նրանցից:

Մրան յաջորդել է մեկէք Աւդիշը, որի միակ, յիշատակելի գործը այն է եղել, որ միջնորդել է կառավարութեան առաջ և վրճարուող 60 լիբայի հարկը կիսով չափ պակասացրել:



Մեխական տուն—ամրոց

Սրանից յետոյ
յաջորդաբար մե-
լիք են դարձել
Զատու, Եմոն,
Եաղուբ, Եաւ-
նան Գ. և Իշահա,
որոնք մի առան-
ձին, յիշատակելի
գործ չեն արել:

Այժմ մելիք է
Համոն, որ մի
քանի անգամ քա-
ջութեամբ յետ
է մղել Օրամարի
քուրդ աշիրէթի
յարձակումները:
Այս մելիքը այժմ
հարկաւոր դէպ-
քում կարող է
մինչև 900 կամա-
ւորներ դուրս
բերել կռուի:



Ռազի մելիք Համոն

է. Թալի մելիքութիւն

Թալի աշիրէթը իւր անուան բացատրութիւնը տալիս՝ հե-
տեւեալ հրաշապատումն է պատմում.

Մելիք-Ազիզ անունով մի մելիք ունենում է մի որդի Թալ
անունով, որը սովորելիս է եղել տեղեկան քահանայի մօտ: Մի
լուսընկալ գիշեր փոքրիկ Թալը կարծելով թէ արդէն լուսացել է,
հագել է իւր նոր թանգագին շորերը և գնացել քահանայի մօտ՝
դաս առնելու: Քահանան կամեցել է նրա թանգագին շորերը իւ-
րացնել, ուստի և սպանել է նրան, շորերը հանել և նրան թա-
ղել իւր տան մէջ, Հայրը երկար որոնել է, սակայն ոչ մի հետք
չէ գտել: Մի օր, մելիք Ազիզը եկեղեցում աղօթելիս, յանկարծ
տեսել է, որ ներս մտաւ մի թռչուն, միանգամայն նման իւր որ-
դի Թալին, և մարդկային լեզուով ասաց, թէ ինքը Թալն է, որին
իւր ուսուցիչ քահանան սպանեց և թաղեց իւր տան մէջ և խըն-
դրում է, որ իւր դիակը այդ տնից հանեն, բայց քահանային չը
սպանեն, որովհետև ինքը նահատակուելով՝ արքայութեան է ար-

ժանացել: Մեկը Աղիզը հանել է դիակը, մի դաշտի մէջ թաղել և վերան մի եկեղեցի կառուցել, որ այժմ կոչոււմ է Մար-Թլայի: Այնուհետև այս աշիրաթը վերակոչուել է Թալ՝ նահատակի անունով:

Մեծ Զիւլուն կարող է կռուի դէպքում 800, իսկ Փոքր Զիւլուն 600 զինուոր հանել:

ԲՆԱԿԱՐԱՆ ԵՒ ԿԱԼ ԿԱՐԱՍԻՔ

Ասորիների տները բաղկացած են մի սենեակից և մի ընդարձակ սրահից: Սենեակը յատկացրուած է ձմեռուայ, իսկ սրահը՝ ամառուայ բնակութեան համար: Թէ սենեակի և թէ, մանաւանդ, սրահի յատակը, և մասամբ պատերի ստորին մասերը, պատած են կաւով և շատ լաւ յղկած, այնպէս որ օրինակելի մաքրութիւն կարելի է պահպանել: Սենեակի պատի մէջ կայ բուխարի, իսկ սրահի մէջ տեղում՝ օջախ: Սրահի առանձնայատկութիւնը նրանումն է կայանում, որ ձմեռը նրա առջևի բացուածքը ծառի ճիւղերի հիւսուածքով ծածկոււմ է, որպէսզի փոքր ի շատէ ապր լինի: Սրահի առջև, և կամ նրա մի անկիւնում, դռնոււմ է մի փոքրիկ, թոնրածէ օջախ, միայն ոչ թէ հայկականի պէս զետնի մէջ թաղուած, այլ զետնի երեսին, մօտ $\frac{1}{3}$ մետր բարձրութեամբ և նոյնքան տրամազծով, միայն փոխանակ սնուածքի, մի կողմից ամբողջ բարձրութեամբ, մօտ 10 սանտիմետրաչափ բացուածք ունի: Սրան մէջ են թխում հացը, որ մեծ մասամբ սիմինդրից են պատրաստոււմ, և սրա վերայ եփում կերակրները:

Նոյն տիպին են նաև մելիքների տները, միայն միջանիսի սրահը սենեակի վրայ է կառուցուած լինում, որպէսզի աւելի բարձր լինելով հարկաւոր դէպքում բարձրից հրացան արձակելու յարմարութիւն ներկայացնէ, իսկ սենեակը փոքրիկ պատուհաններ և միջանի ծակեր է ունենում, այնպէս որ թշնամու յարձակման միջոցին կարելի է այդտեղ ապաստանուել և պատուհաններից ու ծակերից հրացան արձակել: Այսպիսի տնից զատ մելիքներն ունենում են նաև սրան կից կամ հանդէպ ուրիշ, սովորական տուն:

Առանձին ճարտարապետութեամբ կամ շքեղութեամբ չի փայլում նոյնիսկ կաթուղիկոսարանը Քոչանիսում: Սա ևս մի հասարակ շէնք է, բաղկացած մի սրահից, մի մեծ դահլիճից և վեց սենեակներից, կառուցուած նկուղների վրայ: Սրահը զարդարուած է այն եղջերուների եղջուրներով, որ մարշըմոնները որսացել են. սրանց ամենասիրած զբօսանքն էլ որսորդութիւնն է: Դահլիճը



Ատոբց կարօղիկատանը

առ ի շեղ կարուած է մի թախտով, ուր ձգուած են գորգ և ներքնակներ, իսկ յատակը ծածկուած է գորգերով: Մարշլմոնը և նշանաւոր հիւրերը ծալապատիկ նստում են թախտի վրայ, իսկ ստորագրուածները պըպըզում կամ չոքում են յատակին:

Գիւղական տներում կա՛հ կարասիք չկայ, ո՛չ աթոռ և ո՛չ սեղան կարելի է դառնել. բոլորը նստում են ծալապատիկ, մեծ մասամբ օջախի շուրջը: Յարգելի հիւրերի համար ձգուած են փոխաթ և կամ թաղիկ, երբեմն էլ կապերտ: Ծաշը մատուցանում են պղնձէ սկուտեղի (սինու) մէջ, կաւէ խոնչի և կամ, շատ յաճախ, իծի մորթու վրայ: Ուշագրաւ է, որ սրանք ևս, հայերի պէս, սփռոցի միջի փշրանքները չեն թափում, որպէսզի բարաքեաթը չզնայ: Կերակուրները մատուցանում են մի մեծ, կաւի քրիղանով, որի միջից ամենքը ուտում են, առանց քաշուելու կոխելով մասնները նրա մէջ:

Ամբողջ տան մէջ ո՛չ մի պատկեր չկայ, միայն սրահի սիւներից մինի մօտ կախուած է լինում մի փայտէ, հասարակ, փոքրիկ խաչ, որի առջև առաւօտ և երեկոյ կանգնած աղօթում են զերդաստանի աւագազոյն անդամները:

Տուն չկայ, որի անկիւնում դրուած չլինի և կամ սիւնից կամ պատից կախուած չլինի նոր ձևի հրացան, մի քանի դաշոյն, փամփուշտակալներ:

Չափազանց ուշագրաւ են սրահների առջև, մանաւանդ գետակների վրայ խփուած չորսական ցցերը, որոնց վրայ ամրանում են ծառերի ճիւղերի մի հիւսուածք, հանգիստ քուն պարկեկու մոծակներից և տապից տանջուածներին:

Ասորիների աղօթատունը սովորաբար բաղկացած է լինում մի տաճարից և սրահ կից՝ մի դաւթից: Տաճարի մէջ, արևելեան կողմում, կայ մի սեղան, վարագոյրով պատած և սրա աջ կողմում մի աւանդատուն, ուր և՛ դառնում է մկրտութեան աւագանը: Ո՛չ սեղանի վրայ և ո՛չ էլ պատերին չկայ և ո՛չ մի պատկեր և կամ արձան: Գաւթում յաճախ գտնուում են նուիրական մարդկանց գերեզմաններ:

Տաճարի միակ դուռը, որ սովորաբար բացուած է միշտ հարաւային կողմում գտնուող դաւթի մէջ, այնքան էլ փոքր չի լինում: Պատուհաններն էլ չափազանց նեղ են և փոքր, այնպէս որ տաճարի ներսը զրեթէ միշտ կիսախաւար է տիրում:

Թէ տաճարի և թէ դաւթի կտուրները տափակ են, հողով ծածկուած, դարէթ ո՛չ մինը չունի, ոչ էլ խաչ է կանգնացրած լինում: Գաւթի դուռը չափազանց նեղ է և ցած, յատկապէս այս-

պէս շինուած, որպէսզի թուրքերը չկարողանան իրենց գրաստաները ներս քաշել:

Յաճախ գաւթի կողքին, բացօթեայ մի փոքրիկ կողակ է շինուած լինում, որի առջև ամառը կատարուում է առաւօտուայ ու երեկոյի ժամասացութիւն, բայց ոչ պատարագ:

Կոջնակի գործածութիւնը այստեղ ևս ընդհանրացած է, նոր նոր մուտք են գործում զանգերը, որ քաշ են անում եկեղեցու պատի մէջ ամբացրած մի ձողից. առանձին զանգագատուն և ոչ մի եկեղեցի չունի:

Ուշագրաւ է, որ մի քանի նշանաւոր վանքերի գրեթէ բոլոր պատերը ներքուստ ծածկուած են կանանց և տղամարդկանց հանդերձներով, որովհետև սովորութիւն է հիւանդանալիս ուխտ գալ վանքը, և հագի հանդերձները թողնել վանքում, հաւատալով որ այդ հանդերձի հետ իրենց հիւանդութիւններն էլ կը մնան վանքում: Թերևս սա նախնական աստիճանն է այն սովորութեան, որ հայերիս մէջ ևս մինչև այժմ գոյութիւն ունի—հագի հանդերձից մի կտոր կտրել և կապել սուրբ համարուած ծառից և կամ ուխտատեղիների խաչքարերից, բժշկութիւն ստանալու հաւատով:

Ուշագրաւ է նաև, որ վանքերի դրան կողքին կախուած է լինում փոքրիկ զանգ, ուխտաւորը համբուրում է դուռը, զանգահարում է այդ զանգը և ապա մտնում տաճար, նման բուդդայական ուխտաւորին, որ նախքան աղօթելը զանգահարում է, որ գրաւէ աստուածների ուշագրութիւնը:

Ջ Գ Ե Ս Տ Ե Ի Զ Ա Ր Դ

Ասորիների զգեստներն ու զարդերը հայկականից կամ քրդականից շատ չի տարբերում:

Տղամարդիկ հագնում են շապիկ, վարտիկ, շալուար, իշիկ և գետտիկ: Մրանցից միմիայն գետտիկն է, որ տարբերում է հայերի զգեստներից: Գետտիկը շատ նման է քեզախիկին ¹⁾, միայն բոլորովին թևեր չունի և պատրաստուում է թաղիքից, և քեզախիկի պէս բրդոտ չէ: Հարուստների գետտիկի մէջքը և կուրծքը երբեմն պատած է լինում կլապիտոնի ասեղնազործ նշխերով:

Գետտիկ հագնում են նաև քրդերը և հայերը՝ միայն Հաքեարի շրջանում:

Այս կողմերի ասորիներին առանձնայատուկ է թաղիքից պատրաստած սպիտակ, կոնաձև, բարձր գլխարկը, որ միանգա-

¹⁾ Տես իմ Վասպուրականի հայերի ազգագրութեան մէջ:

մայն յիշեցնում է Ասորեստանի բարձրաքանդակների մէջ քանդակուած գլխարկները և որը նախատիպ կարող է համարուիլ հայկական վեղարին:

Առանձնայատուկ է նաև այն, որ բոլոր աշխրէթ, տոն, կազմող ասորիները, թէ երիտասարդները և թէ հասակաւորները, կրում են փոքրիկ, ծուռ դաշոյն, խրելով իրենց գօտու մէջ, երախակալը դէպի ձախ ձեռքը դարձրած և ոչ դէպի աջ՝ ինչպէս ընդունուած է հայերի և քրդերի մէջ:

Ասորիները մասնաւորապէս, և այս քարքարոտ և ժայռոտ երկրի բոլոր բնակիչներն ընդհանրապէս, ոտներին զուլայի վրայից հագնում են Ուշիկ, որ պատրաստուած են հէնց իրենք, բրդից: Այս ազանելիքի առաւելութիւնը նրանումն է կայանում, որ չափազանց փափուկ լինելով, քարքարոտ տեղերում նեղութիւն չի պատճառում և ժայռերի վրայից չի սահում: Սա միանգամայն նման է հայկական տրեխին:

Այս կողմերի ասորիների մի առանձնայատուկութիւնն էլ այն է, որ տղամարդիկ էլ զլխի մազերը չեն կտրում և երկու կամ երեք հիւս արած կախ են ձգում: Մօրուս միայն քահանաներն ու ծերունիներն են թողնում:

Տօներին սիրում են զունաւոր փետուրներով և ծաղիկներով զարդարել իրենց գլխարկները: Նոյնը անում են և՛ կանայք, խրելով փետուրներն ու ծաղիկները իրենց զլխի փաթաթանների մէջ:

Կանայք հագնում են զրուն, որ միանգամայն նման է հայկական զրունին և վերայից յունական կուրտկա, կլապիտոններով զարդարուած: Զբաւոր կանայք կուրտկայի փոխարէն հագնում են գեառիկ, որ նման է տղամարդկանց գեառիկին:

Գլխներին աղջիկները դնում են ֆաս, շուրջը կապում եազմա, և ճակատը զարդարում դրամներով: Քոչանիսում կրթուած աղջիկները, ինչպէս օրինակ մարշըմոնի քոյրը և ուրիշները, միայն ֆաս են ծածկում:

Կանայք միայն եազմա են կապում, իսկ ոմանք, մոկացի հայերի նման, մարգարիտներով զարդարուած կոտ են ծածկում: Բերանը շորով ծածկելու սովորութիւնը սրանց մէջ չկայ:

Թէ աղջիկները և թէ կանայք զլխի մազերը մանր հիւսեր են անում և մէջքի վրայ ձգում:

Պէտք է նկատել, որ Քոչանիսի ասորի կանայք արդէն թողել են իրենց տեղական շորերը և դրանց փոխարէն դայրա են հագնում, գլխներին եազմա կապում, իսկ աղջիկները միմիայն ֆաս ծածկում:

Հողերականութիւնը քահանայից սկսած մինչև մարշլմոնը իւր զգեստի տարազով չի տարբերուում աշխարհականից, երբեմն միայն եպիսկոպոսներն ու մարշլմոնը երկար ֆարաջի նման վերարկու են հագնուում: Նոյն իսկ եկեղեցում սովորական ժամասացութեան ժամանակ ոչ միայն քահանաները այլ և մետրապօլիտը և մարշլմոնը շուրջառ չեն պոնուում իրենց վերայ, միայն պատարագին պատարագիչը և սարկաւազը ըզգեստաւորուում են: Սարկաւազը հագնուում է մի սպիտակ շապիկ, որը իջնուում է մինչև ոտները, պատարագիչ քահանան նոյնպիսի մի շապիկ, մէջքին կապուում է մի գօտի, երկու ուտերին ձգուում է մի ուրար և ծայրերը ամրացնուում դօտուում: ապա մի սպիտակ շուրջառ անուում է վերան: Պատարագիչ կուսակրօնը, սկսած վարդապետից մինչև մետրապօլիտը, նոյն ձևով են զգեստաւորուում, միայն սրանք, որպէս առանձնաշնորհումն, գլխներին կապուում են սպիտակ շոր: Վերջին ժամանակներս մարշլմոնը անգլիական միսիօնարների ազդեցութեան ենթարկուելով՝ ընդունել է նրանցից իբր նուէր մի թագ, մի ոսկեթել շուրջառ և մինչև ոտներն իջնող ուրար: Երբ ևս Դեր վանքումն էի, մետրապօլիտը սաստիկ բողբոլում էր այս նորամուծութեան դէմ. նրա ասելով մարշլմոնն էլ պէտք է ըզգեստաւորուի այնպէս պարզ՝ ինչպէս ինքը:



Ասորի սարկաւազ.



Ասորց մետրապոլիտը՝ զգեստաւորուած.



Ասորի Բահանայ՝ զգեստաւորուած.

ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՐՍԱՆԻՔԻ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

Հասակ.—Առհասարակ ասորիներն ամուսնանում են տղաները՝ 15—20, իսկ աղջիկները՝ 12—14 տարեկան հասակում:

Ծնամուժեան աստիճան.—Եկեղեցական օրէնքներով ամուսնացող զոյգից պահանջուում է, որ միմեանցից հետո լինեն խնամութեան 4 և ազգակցութեան 7 աստիճան: Եեղումները հազուադէպ չեն:

Ամուսնութիւն ըստ ազգութեան.—Ասորիներն ուրիշ քրիստոնեայ ազգերի հետ խնամանում են, իսկ մահմեդականները հետ՝ ոչ: Այժմեան մարշրմոնի հօրեղբայրը ամուսնացած է բաղիշեցի մի հայուհու հետ: Հայուհիների հետ ամուսնանալիս՝ կրօնափոխութեան վերաբերեալ ոչ մի ծիսակատարութիւն չեն կատարում, որովհետև հայոց եկեղեցին շատ մօտ են համարում իրենց եկեղեցուն, մինչդեռ բողոքականի կամ կաթողիկի հետ ամուսնանալիս՝ հարմնացուին խոստովանեցնում են, իրենց ծէսով հաղորդութիւն տալիս և խոստումն աւանում, որ նետտրական է դառնալու:

Օրօրոցախազ.—Հայերի նման, սրանք ևս սովորութիւն ունեն փոքրահասակներին և նոյն իսկ մանուկներին նշանելու, խոստումն տալով, որ երբ մեծանան՝ պսակուեն: Հաղլու է պատահում, որ այսպիսի խոստումը դժովեն:

Ամուսնալուծութիւն.—Ընդհանրապէս շատ հազիւ է պատահում ամուսնալուծութիւն, և այն էլ գլխաւորապէս երբ կնոջ անհաւատարմութիւնը միանգամայն յայտնի է լինում: Ամուսնալուծութեան թոյլտուութիւնը վերապահուած է միայն մարշրմոնին: Կնոջ ամուսնութեան դէպքում պատահում է, որ ամուսինը յայտնի կերպով ապօրինի կին է պահում: Թէև ժողովրդական կարծիքը այս դէպքում այնքան էլ չի մեղադրում, սակայն եկեղեցին հրաժարում է այդպիսիներին սրբութիւն տալ և եկեղեցական ծէսով թաղել: Ապօրինի երեխաներին մկրտում են:

Հարմնացուի ընտրութիւն.—Ընդհանրապէս թէ տղի և թէ մանաւանդ աղջկայ կամքը զուգակցի ընտրութեան վերաբերմամբ կամ բոլորովին չեն հարցնում և կամ ճնշումն են գործում: Ընտրութիւնը կատարում են ծնողները և եթէ սրանց բռնութիւնից ստիպուած աղջիկը փախչում է իւր սիրած երիտասարդի հետ, սրանք յարձակւում են նրանց վրայ և եթէ կարողանում են, սպանում են թէ աղջկան և թէ մանաւանդ փախցնող երիտասարդին: Եթէ չեն յաղորդեցնում, մի առժամանակ խռով են մնում, զրկում աղջկան որևէ բան ստանալու յոյսից ու վերջի վերջոյ հաշտուում:

Ազգիկտեսս.—Ասորի ազգիկները բաւական ազատ կեանք են վարում, և աշխատելով թէ դաշտում և թէ մօտակայ լեռներում փայտ և խոտ կրելով, յարմարութիւն ունեն թէ երիտասարդների և թէ սրանց ծնողների հետ տեսնուելու. սակայն եթէ մի կին ցանկանում է աւելի մօտիկից տեսնել մի ազնկայ, մի պատրուակով գնում է նրա տունը և առանց քաշուելու քննում ու զննում ազնկան՝ նրա մօր և ազգականների ներկայութեամբ, որոնք շատ լաւ հասկանում են սրա գալու նպատակը: Երբ հաւանում է ազնկան ուղղակի ուզում է, իսկ թէ ոչ՝ հեռանում է: Եթէ ազնկայ ծնողները մտադիր են լինում յարգելու առաջարկը՝ հիւրասիրում են այդ եկած կնոջը, իսկ եթէ ոչ, սառն են վարւում:

Նշանտրէս (Նիշանկա).—Հարսնացուի ընտրութիւնից յետոյ երիտասարդի ծնողները մի կողմնակի մարդու միջոցով հարցնում են ազնկայ ծնողներին, թէ եթէ ուզեն՝ չե՞ն մերժի, և երբ դրական պատասխան են ստանում, հրաւիրում են իրենց մօտ քահանային, քաւորին և մի քանի պատուաւոր բարեկամների՝ նշանտրէք զնալու: Քահանան, եկեղեցական կարգի համեմատ, հարցնում է երիտասարդին, թէ համաձայն է նշանադրուել այն ինչ ազնկայ հետ և երբ առնում է համաձայնութիւնը՝ առանց նրան, նրա հօր և տղամարդ բարեկամների հետ գնում է ազնկայ տունը: Յաճախ երիտասարդի անից նախապէս ուղարկում է զինի, միս և կամ այլ ուտելիչն ազնկայ տունը՝ նշանդրէքի երեկոյին ընթրիք տալու: Ուտել-խըմելուց յետ՝ քահանան դառնում է զէպի ազնկայ հայրը և ասում. Ծնորհակալ ենք, դուք մեզ լաւ հիւրասիրեցիք, ուտեցիք, խըմացրիք, սակայն ինչո՞ւ չէք հարցնում, թէ ինչի՞ հնք եկել:

— Բարի, հազար բարի էք եկել, պատասխանում է ազնկայ հայրը. հարևան, բարեկամներ ենք, միշտ էլ պէտք է զենանք զանք, աւելացնում է, ցոյց տալու՝ թէ չզիտէ սրանց գալու պատճառը:

Քահանան յայտնում է, որ եկել են խնդրելու նրա ազնկայ ձեռքը:

— Ազնիկը իմս չէ, մօրն է, պատասխանում է հայրը, նա է անուցել և մեծացրել նրան, նրանից ուզեցէք:

Նւ երբ նրան են զիմում, սա էլ ասում է, թէ ազնիկը իրենը չէ, իւր տեղրինն է. սա էլ ցոյց է տալիս մի ուրիշի վրայ, մինչև որ ամենահեռու բարեկամները կրկին ցոյց են տալիս ազնկայ հօրը, ասելով. Հայրը զիտէ, մենք այստեղ եկել ենք ուտել-խամելու և շնորհաւորելու, ուս ուզում է, թող տայ:

Այս անգամ արդէն հայրը տալիս է իւր համաձայնութիւնը. և քահանան ձեռնամուկէս հարցնելով ազնկայ համաձայնութիւնը՝

օրհնում է մի մատանի և կամ մի ուրիշ ընծայ և տալիս աղջկան:

Կտրուածք (Խըլլէ).—Նշանադրութիւնից մի քանի օր կամ շաբաթ յետոյ երիտասարդի հայրը մի քանի տղամարդ-աղջականների հետ գնում է հարսնացուի տունը, ուր հրաւիրուած են լինում նաև իրենց մի քանի աղջականներ: Մատուցում է ճաշ, որից յետոյ սկսւում է մի սակարգութիւն ամուսնացողների հայրերի մէջև, որոշելու թէ ինչ պիտի վճարէ երիտասարդի հայրը՝ աղջկայ հօրը՝ նրա աղջիկը առնելու համար: Սակարկութիւնը տևում է բաւական երկար, որին և միջամտում են երկու կողմի աղջականները: Վերջ ի վերջոյ որոշւում է, որ տղայի հայրը տայ 3 ոչխար, մի եղ, մի ոսկի, զանազան ընծաներ և 25 պիստար էլ հարսնացուի հօրը՝ իբր նրա տուած կաթի գին (զուգէ տխալվա դիեմմա):

Փայ (Խըլլաթ).—Նշանադրութիւնից մինչև պսակը արգելում է երիտասարդին բացայայտ կերպով իւր նշանածի մօտ գնալ, այլ միմիայն ծածկաբար: Նշանաւոր տօներին փոխանակ երիտասարդը գնալու հարսնացուի մօտ, երիտասարդի տնից հարսնացուին և վերջինիս տանից երիտասարդին նուէրներ են ուղարկում, գլխաւորապէս ուտելիք, երբեմն էլ զանազան զարդեր կամ հազնելիք հարսնացուի համար:

Հարսանիքից մի քանի օր առաջ փեսայացուի տանից տանում են հարսնացուի տունը խոստացուած կտրուածքը:

Յետոյ թէ փեսացուին և թէ հարսնացուին իրենց ընկերները տանում են լողացնում. յաճախ փեսացուին լողացնելիս հրաւիրում են դաւուլ-զուբնա: Նախ քան լողացնելը՝ կանչում են նաև սափրիչին, որ սափրէ փեսացուի հօրուքը և խուզէ նրա գլուխը: Այս միջոցին նուէրներ չեն արւում սափրիչին, ինչպէս այդ ընդունուած է հայերի մէջ: Ապա ընտրւում է ազադ-պաշի, կամ հարսանիքի գլխաւոր, գորշա տխլոլա, այսպէս. ամէն մի հրաւիրուած երիտասարդ նուէր է տալիս և ամենամեծ նուիրատուն դառնում է գլխաւոր. սրան է յանձնւում այս բոլոր նուէրները, որպէսզի սա ծախսէ հարսանիքի ընթացքում, նուէրներ տայ հաւ, ոչխար, ցորեն և այլն նորապսակների առջև բերողներին: Պէտք է անել, որ ինչպէս հայերի և քրդերի, այնպէս և ասորիների մէջ սաստիկ տարածուած է այն սովորութիւնը, որ ոչ միայն հարսանիքի, այլ և՛ նոյնիսկ սովորական ճանապարհորդութեան ժամանակ, պատուաւոր մարդկանց առջև են բերում ցորենի խորձ, գառ, ոչխար, եղ՝ իբր նուէր և սպասում վարձատրութեան:

Պսակ.—Հետեւել օրը, առաւօտեան հաւաքւում են թէ փեսա-

յացուի և թէ հարմնացուի տունը նրանց երկու սեռի բարեկամները:

Փեսայցուի ընկերները դաւուլ-զուռնի առջնորդութեամբ տանում են փեսայացուի պատրաստած հարմնացուի հարսանեկան հանդերձները՝ հարմնացուի տունը, ուր վերջինիս ընկերուհիները երգեր ասելով հազցնում, զարդարում են հարմնացուին: Փեսայացուի ազգականներից մի տղամարդ, մի ընծայ տալով, կապում է հարմնացուի դօտին: Ապա սրա երեսի շալը ուղարկում են եկեղեցի, որ քահանան օրհնէ, և բերում ձգում են հարմնացուի երեսին:

Փեսայացուի ընկերները վերադառնալով հարմնացուի տընից, հազցնում են փեսայացուի շորերը և դաւուլ-զուռնի առաջնորդութեամբ, հրացաններ պարպելով տանում փեսայացուին եկեղեցի, ուր նրան քաւորի հետ թողնելով, դնում են հարմնացուին բերելու: Այստեղ քաւորկինը (դառութա) բռնում է հարմնացուի աջ ձեռից, փեսաքուրերը (խատ խեթընա) կռներից և 3 անգամ շրջելով օջախի շուրջը՝ հանում են տնից ու ուղևորում դէպի եկեղեցի:

Հարսին կանգնեցնում են փեսայի աջ կողմը, իսկ քաւորին՝ ձախ, իսկ պսակի աւարտին՝ հարսին բերում են փեսի ձախ կողմը, որովհետև Աստուած Ադամի ձախ կողքից ոսկոր առաւ և ըստեկծեց կնոջը:

Այստեղ քահանան, աղօթքներ կարդալուց յետ, մի ուրար ձրգում է փեսացուի վիզը և խաչաձև կապում, ի նշան որ հարմնացուն ձգուեց նրա վիզը և ամրապէս կապուեց նրա հետ՝ ապա մի խաչ և մի մատանի ձգելով սրբութեան բաժակի գինու մէջ՝ ճաշակում է հարս ու փեսին, խաչը հանում դնում փեսի գլխի փուշու մէջ, իսկ մատանին մտցնում աղջկայ աջ ճկոյթը: Քաւորը ձեռին բռնած է լինում ջարլանան (այգի).— Սա խաչաձև դրուած փայտերի երկու ձող է, մի քառանկիւնի շրջանակի մէջ ամրացած, և ամբողջովին պատած մրգերով, մանաւանդ խնձորներով:

Պսակի խորհուրդը կատարելուց յետ՝ դուրս են գալիս եկեղեցուց, որի դռան առջև ընկոյզ, քիշմիշ և մանր դրամ են թափում հարս ու փեսի գլխներին: Ապա հրացաններ արձակելով, պարելով, երգելով գալիս են դէպի փեսի տունը. մի բարեկամի տան դռնից անցնելիս՝ կտուրից չամիչ, ընկոյզ, նուխուզ են ածում հարս ու փեսի գլխին և կամ տուն են հրաւիրում և սրբեով կամ շարքաթով հիւրասիրում:

Երբ հասնում են փեսի տան դռանը, սկսում են պարել. այս միջոցին փեսան և քաւորը բարձրանում են տան կտուրը, նրան

հետևում են զինուած մակարները: Հարսը մօտենում է դռանը՝ բայց ներս չի ուզում մտնել. այս միջոցին ազապները հրացան են արձակում և փեսան առնելով մի խնձոր քաւորի բռնած այգուց (ջարլանանից), խփում է հարսին, միևնոյն ժամանակ փեսի մայրը ընդառաջ է ելնում, մի ընծայ տալիս և համբուրելով՝ ներս տանում: Հարսնետրները միմեանց հրհրելով աշխատում են վերցնել փեսի ձգած խնձորը, որովհետև այդ սուրը է համարում:

Յանախ մի ամանով իւղ են առաջ բերում, որի մէջ հարսը իւր մատը թաթախելով քսում է դռան որմնակալ քարին, որպէսզի իւր մուտքը բարեբեր, իւղալի, լինի:

Սենեակում հարս ու թագաւորի համար առանձին-առանձին տեղեր են պատրաստուած լինում.— պատին գորգ խփած և գետնին ներքնակ ձգած և քահանային օրհնել տուած: Այս տեղերից մինի վրայ նստում է թագաւորը քաւորի հետ, միւսի վրայ հարսը՝ քաւորկնոջ և փեսաքուրերի հետ:

Հենց որ հարսը գալիս նստում է, իսկոյն մինը մի արու երեխայ բերում դնում է սրա գիրկը, որպէսզի սրա առջիկնակ որդին արու լինի:

Այնուհետև երեք օր շարունակ տեղի է ունենում կեր ու խում և պար: Գրեթէ բոլոր հարսնետրները առաւօտ, երեկոյ կերակուրներ և խմորեղէններ առած գալիս են թագաւորի տունը և այստեղ այս բերածները միասին ուտում, խմում և պարում:

Թագաւորը իւր ազապներով հազարաւոր կատակներ է տնում և ուրախացնում հարսնետրներին: Այսպէս ընտրում են գզիրներ, որոնք բռնում բերում են թագաւորի մօտ հարսնետր երիտասարդներին և ամբաստանում մի որևէ յանցանքի, գողութեան մէջ: Թագաւորը իբր թագաւոր, մեալիք, տուգանքի է ենթարկում և գզիրները ստիպելով առնում են, բերում դնում ընդհանուրի սեղանին, որովհետև տուգանքը միշտ հաւ, գինի կամ որևէ ուտելիք է լինում:

Հարսանիքի վերջին օրը, որ սովորաբար չորրորդ, բայց երբեմն էլ եօթներորդ օրն է լինում, հարսնետրները իրենց անբրից զաթա են բերում թագաւորի տունը այսպէս. զաթաները դարսում են մի սինու մէջ, շուրջը մոմեր վառում և մի երիտասարդի գլխին դրած բերում, պար գալիս և հանդիսաւոր կերպով յանձնում անտեսին: Մատուցում է ճոխ ճաշ, որի ժամանակ բաժանում է նաև այս բերուած զաթանները:

Ճաշից յետոյ տեղի է ունենում ջարլանայի (այգի) վաճառումը: Գաւորը և կամ մի ուրիշ ազգեցիկ մարդ յայտարարում է,



Ասորիների հարսանիք. քաղաւոր խնձորով խփում է հարսին.

Թէ Թագաւորը Թախտից ընկել է, և այս պատճառով նրա այգին ծախուում է, մի է ուզում առնել:

Սկսւում է սակարկութիւն. մինը առաջարկում է մի մեծիտ, միւսը՝ երկու, երրորդը մի որևէ ընծայ և այլն: Այս բոլոր առաջարկած գումարներն ու ընծաներն էլ անմիջապէս հաւաքում են, այգին տալիս ամենաշատ նուէր տուողին, որը և բաժանում է այգու խնձորները հարսնետրներին:

Այս նուէրները, որ համապատասխանում են հայկական հարսանիքների սաշուին, երբեմն փոխարինում են ամբողջ հարսանիքի ծախսը:

Այգին ծախելու հետևեալ օրը նորապսակները առագաստ են մտնում և բամբասաւէր կանայք գալիս են Թէ հիւրասիրուելու և Թէ կուտութեան սաւանը տեսնելու:

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿԵԱՆՔ.

Ասորիների մէջ, մանաւանդ Թխումում և Թիարում, նահապետական գերդաստանը պահպանել է իւր գոյութիւնը. կան գեր-



Ասորի կանայք.

դաստաններ, որ բաղկացած են մինչև յիսուն անդամից: Այսպիսի գերդաստանների կազմակերպութիւնը և ներքին կեանքը միանգամայն նման է հայկական գերդաստանին: Այստեղ կա իշխանութիւնը կենդրոնացած է գերդաստանի՞ջ հօր ձեռքում, նա՞յ է

տնօրինում գերդաստանի սեպհականութիւնը, գործի զնում գերդաստանի անդամներին, նրան մահից յետոյ իշխանութիւնը անցնում է իւր կրտսեր եղբօրը և կամ աւագ որդուն: Գերդաստանի ներքին կեանքի զեկավարը հանդիսանում է մայրը, նա է պահում տան բարեքնները, գործի զնում աղջիկներին և հարմներին: Սրանց մէջ ևս հարսները երկար տարիներ չեն խօսում իրենց սկեսրայրի, սկեսրոջ և տեգրերի հետ. սրանք ևս գերդաստանի տղամարդկանց հետ չեն ճաշում, այլ առանձին, նրանց ճաշելուց յետոյ: Ասորի կիներ, հայ կնոջ պէս նոյնպէս բարոյական և վերին աստիճանի աշխատասէր է, մինչդեռ ամուսինը օտարութեան մէջ դեղերում է, կիներն է ամբողջ տնային և դաշտային աշխատանքները



Միկիի մայրն ու կինը.

կատարում, լեռների կատարներից խոտ ու ցախ հաւաքած՝ շալակած տուն բերում (տես պատկերը), աղբիւրից ջուր կրում, հաց թխում, կերակուր եփում: Նոյն իսկ մելիքների կանայք շատ հետու են քնքշութիւնից և հասարակ կանանց նման ամէն աշխատանք կատարում են:

Երեխաների միակ դաստիարակութիւնը զինավարժութեան մէջ է կայանում: Հազիւ դառնում է 9—10 տարեկան, տալիս են ձեռքը ազեղ, որ գնայ թռչուններ որսայ, երբ քիչ մեծանում է՝ կեռ գաշոյնը նրա մէջքի՝ գօտու անհրաժեշտ մասն է կազմում և

գրեթէ չկայ մի
 երիտասարդ՝ որ
 իւր հրացանը չու-
 նենայ: Դերի-
 ներին ամեն մի
 երիտասարդ, չա-
 փահաս մարդ՝
 զէնքն առած
 ուխտ է գնում, և
 այստեղ է՝ որ
 ցոյց են տալիս
 նրանք իրենց շը-
 նորհքը: Ձիարշաւ
 չկայ բոլորովին,
 որովհետև այս,
 Ջուլամերիկի
 շրջանում, ձի էլ
 չկայ, ճանա-
 պարհներ չլինե-
 լու պատճառով,
 միակ գրասար՝
 ջորին է:



Դառնարած.

ՏՂԱՐՆՐԻ ԵՒ ԿՆՈՒՆԻ.

Ամուլ կանայք ուխտ են անում, որ եթէ զաւակ ունենան՝
 քահանայական կոչման նուիրեն, իսկ եթէ աղջիկ՝ նրա գլխագինը,
 որ ստանալու են ամուսնացնելիս՝ եկեղեցու նուիրեն:

Հէնց որ երեխան ծնում է, անմիջապէս լողացնում են սառն
 ջրի մէջ և յետոյ ամբողջ մարմնին բարակ աղ ցանում և խանձա-
 րուրում, ի յիշատակ այն սովորութեան, որ յիշում է Նզեկիէլ մար-
 գարէն^{*)} (XVI. 4). Դու երբէք չեղար լուացուած ջրով՝ մաքրուե-
 լու համար, երբեք չ'աղուեցար աղով, ոչ խանձարուրած:

Արու երեխայի ծնունդը սրանց մէջ ևս աւելի մեծ ուրա-
 խութիւն է պատճառում ծնողներին, քան աղջկանը: Սրանց մէջ
 ևս տղայի ծննդեան ժամանակ տան փոքրերը աչքի-լուս ևն վա-
 զում մօտիկ ազգականներին և նուէրներ ստանում:

^{*)} Les nestoriens ou les tribus perdus, par A. Grant, Paris. 1843.
 p. 175.

Մկրտութիւն.—Սովորաբար մկրտութեան խորհուրդը կատարում են երեխայի ծննդից եօթ օր յետոյ: Մկրտութեան նախընթաց երեկոյին, առանց որևէ նուէր ուղարկելու, այդ մասին իմացնում են քաւորին (ղարիվա): Առաւօտեան քաւորը, որ ասորինների մէջ էլ տո՛մական է լինում, զալիս է ծննդկանի տունը, բերելով իւր հետ, եթէ իհարկէ հարուստ է, մի ոչխար իրր նուէր: Այս վերցնում է երեխային, տալիս իւր կնոջ գիրկը և նրա հետ դնում եկեղեցի: Այստեղ, եթէ հարուստ է, մի քահանայի խնդրում է պատարագ մատուցանել, իսկ մի ուրիշ՝ կնքել երեխային, իսկ եթէ աղքատ է, մի քահանայ մկրտում է երեխային եկեղեցու խորանում, ուր դանւում է մկրտութեան աւազանը: Մկրտութիւնից յետոյ քաւորը և կամ նրա կինը զրկում է երեխային և առանց քահանայի, և նոյն իսկ մօմերի, վերադառնում են տուն և երեխային տալիս նրա մօրը, որը առանց մի որևէ ծրայակառարութեան վերցնում, դնում է իւր կողքին, կամ օրօրոցը: Սրանից յետոյ ներկայ եղողներին հիւրասիրում են ճաշով:

Ահա ասորական միքանի անուններ.

Աւրոն=Աւարն.	Կանանց անուններ՝
Իրամիա=Երեմիա.	Քավա=Եւա.
Իշմայիլ=Իզմայիլ.	Ռարկա=Ռերէկա.
Հարէլ=Արէլ.	Քաննա=Աննա.
Յակու կամ Յակուբ=Յակոբ.	Իլիշրա=Եղիսարէթ.
Իոսու=Յեսու.	Շամիրազ=Շամիրամ.
Իւհաննան=Յովհաննէս.	Վէրդի=(Վարդուհի).
Գէվարդիս=Գէորդ.	Նիգար=(Գեղեցկուհի).
Բաոսիլիուս=Բարսեղ.	Շաքար=շաքար.
Իսաէփանուս=Սահփաննոս.	Կիրանու=բուստ.
Պատրուս=Պետրոս.	Սովորաբար միմեանց հօր անունով են կոչում՝
Պօլուս=Պօղոս.	Իրա դը Գիվարդիս=Գէորդի տըղան.
Կան միքանի զուտ աղգային անուններ՝	Իրատա դը Գիվարդիս=Գէորդի աղջիկը:
Վարաս=Վարդ.	
Քոշարա=Յարութիւն.	
Գինիսա=Արևածաղ.	

Մեղոնհանէք.—Մկրտած մանկանը եօթ օր շարունակ թողնում են մկրտութեան շորերի մէջ, ութերորդ օրը քաւորիկինը զալիս է և մի մաքուր ամանի մէջ լուսնում մանկան այն տեղերը, ուր մեղոն է քսուած, և այս ջուրը լցնում են կամ գետը կամ մի

մաքուր տեղ: Ապա լողացնում է մանկանը և նոր շորերով խան-
ձարուրում:

Ծննդկանը, եթէ արու զուակ է ունեցել, քառասուն. իսկ է-
թէ աղջիկ, վաթսուն օր էքառասունը է պահում, այսինքն տնից
դուրս չի գալիս, առագաստ չի մտնում, առանձին է ճաշում և
ձեռքը ոչ մի իրի չի դիպցնում, որովհետև մաքուր չի համար-
ւում: Այս ժամանակամիջոցը լրանալուց յետոյ՝ ծննդկանը լողա-
նում է, լողացնում մանկանը և տանում նրան եկեղեցի, մի որևէ
նուէր՝ շալ, խունկ, ձէթ, դրամ, առնելով իւր հետ, որ տալիս է
բահանային: Վերջինս աղօթքներ է կարդում թէ՛ նրա, և թէ՛ ման-
կան վրայ:

Երբ երեխան ոտ է ելնում, հատիկ (բըսը) են պատրաս-
տում ընկոյզից, կաղինից և քիչմիշից ու լցնում մանկան գլխին:

Թ Ա Ղ Ո Ի Մ Ն.

Ասորիներէ մէջ երբ մի հիւանդ մարդ հոգին աւանդում է,
չըջապատողներից սրտոտները նրա աչքերը փակում են, ձեռները
խաշում, ոտները ուղղում: Եթէ աչքերը բաց են մնում, ասում են,
թէ մի պանդուխտ բարեկամի կարօտ է քաշում:

Ննջեցեալին անմիջապէս դարձնում են դէպի արևելք և ոտ-
ների մօտ խունկ ծխում մի կուէ ամանով: Իսկոյն հրաւիրում
են բարեկամներն ու քահանան: Վերջինս աղօթքներ կարդալով,
փայտէ մի խաչ է շինում և ձգում անշուշտ նոր բերած ջրով լի
կաթսայի մէջ և կարգադրում տաքացնել: Ապա ժամակոչը և կամ
մի ծերունի, եթէ իւրարկէ ննջեցեալը տղամարդ է, և կամ մի պա-
ռաւ կին, եթէ կին է, լողացնում է ննջեցեալին այսպէս. նախ լո-
ղացնողը թաթախում է իւր աջ մատը կաթսայի օրհնած ջրի մէջ
և ննջեցեալի ճակատին խաչ քաշում, ապա սկսում աջ ձեռքը և
ամբողջ աջ կողմը լուսնալ տաք ջրով և սապոնով, և յետոյ ձախ
ձեռքը և ձախ կողմը: Աւելացած ջրից մի քիչ լցնում են մի թա-
սի մէջ և մնացածն անշուշտ թափում: Յետոյ այդ թասի մէջ
ձգում են կաթսայի միջի փայտէ խաչը, մօտը դնում մի ճրագ և
սրանց վրայ կորզում ջրի կաթսան, մի կողմը փոքր ինչ բար-
ձրացրած, որպէսզի ճրագը կարողանայ վառուել երեք օր շարու-
նակ: Սրանից յետոյ կտոււից շապիկ-վարդիկ են կարում, հագ-
ցնում ննջեցեալին ու պատնքում, և նոյն կտորով ոտներից, մէջ-
քից և կոներից կապում: Երեսը առայժմ բաց են թողնում և մի
շորով ծածկում: Ապա երկու փայտէ երկար ձողերի մէջ թոկ են
կապկապում և ննջեցեալը ջեջիմի մէջ փաթաթելով դնում այս
ձողերի մէջ: Հարուստներն երբեմն դազազ են շինել տալիս:

կարճ միջոցից յետոյ զալիս են քահանան և երկու սեռի բարեկամներ. կատարուած է թաղման կարգը, բարեկամները վերցնում են ննջեցեալին՝ ձողերի ծայրերից, երեք անգամ բարձրացնում և դնում զետնին, և ապա տանում ղէպի գերեզմանատուն: Ննջեցեալի դրուած տեղում անմիջապէս մի ճրագ են դնում, որ երեք օր շարունակ վառ է մնում: Առջևից դնում է քահանան տիրացուի հետ, իսկ սրա յետևից չորս տղամարդիկ տանում են ննջեցեալին, ձողերի ծայրերը իրենց ուսերին դրած:

Նարուստները թաղման միջոցին ննջեցեալի առջևից տանում են նրա ձին, ուղիղ թամբած և ոչ թէ հայերի պէս՝ հակառակ կողմից, միայն վերան ձգում են սև կամ գունաւոր երկար շոր:

Ոմանք էլ ննջեցեալի թուրը և հրացանը իրենց վրայ հակառակ կողմից կապելով, դնում են ննջեցեալի դագաղի առջևից:

Երբ յուզարկաւորութիւնը համնում է որոշ տեղ, ննջեցեալին դնում են զետնին, և կանայք, որ ուղեկցում են, շրջապատում են նրան, լալիս ու ողբեր ասում երգելով: Յաճախ աշխատում են կանանց արգելիլ լաց լինելու, ասելով, որ նրանց արցունքը կըթոչէ ննջեցեալի միւս աշխարհում ունեցած տեղը և զբանով կ'անհանդուտացնեն նրան: Յետոյ կանայք վերադառնում են ննջեցեալի տունը, իսկ տղամարդիկ դարձեալ երեք անգամ վերցնում են դագաղը, վայր դնում և ապա տանում գերեզմանատուն: Թաղման կարգը կատարելիս քահանան մի քիչ հող է աւնում բուռը, բոլոր յուզարկաւորներն էլ հետևում են նրան: Քահանան օրհնում է հողը և ձգում գերեզմանի մէջ, ուր արդէն իջեցրած են լինում ննջեցեալին՝ հանելով ջեջիմի միջից: Մինչև թաղման կարգի աւարտը այս ջեջիմը բռնում են գերեզմանի վրայ, և յետոյ տանում տուն, լուանում և կրկին բանեցնում:

Թաղման կարգը աւարտելուց յետոյ յուզարկաւորները մի քանի միթիթարական խօսքեր ուղղելով ննջեցեալի մօտիկներին՝ վերադառնում են և զալիս մի գետի կամ աղբիւրի մօտ, քահանան աղօթքներ է կարդում այս գետի կամ աղբիւրի, և կամ, եթէ զետ կամ աղբիւր չկայ, յատկապէս բերուած ջրի վրայ, և յետոյ բոլորը լուացուում են և ապա գնում եթէ ննջեցեալը հարուստ է եղել՝ եկեղեցի, ուր սկսում են պատարագ մատուցանել, իսկ եթէ աղքատ՝ ուղղակի սգատուն: Այս երկու ղէպքումն էլ յուզարկաւորողներին ճաշ են տալիս, մատուցանելով զլիաւորապէս մօտիկ բարեկամների տներից ուզարկուած կերակրները: Ճաշից յետոյ քահանան օրհնում է սեղանը և հոգեհանգիստ կատարում, որից յետոյ միթիթարական խօսքեր ասելով տնեցիներին՝ ցրում են:

Թաղման երրորդ օրը կանայք վերցնում են ննջեցեալին լո-

դացնելիս զործածած կաւէ թասը իւր ջրով ու խաշով և զնուս են գերեզմանատուն, ուր զալիս է նաև քահանան, օրհնում գերեզմանը, ջուրը խաշածև լցնում գերեզմանի վրայ, փայտէ խաշը անկում ննջեցեալի գլխի կողմը, և թասը կտորում: Ապա բոլորը զալիս են եկեղեցի, ուր և սկսում են պատարագ մատուցանել: Մրա աւարտին սգատնից բերում են եկեղեցու դուռը մեծ կաթսաներով մտեղէն կերակուր և մի մի կտոր միս զնելով երկական հացերի մէջ՝ բաժանում ժամուտըներին:

Թաղման իններորդ օրը դարձեալ զնուս են գերեզմանատուն, օրհնել տալիս և ապա զալիս եկեղեցի, պատարագ մատուցանում, որից յետոյ բոլոր ժամուտըներին հրաւիրում են սգատուն՝ հոգեհացի:

Սրբ բոլոր հրաւիրեալները ցրւում են, մնում են քաւորը, քաւորկինը և միքանի շատ մօտիկ ազգականներ: Քաւորը մի որևէ նուէր է տալիս սգաւորներին և սափրիչին կանչելով տղամարդկանց մօրուաները սափրել տալիս, իսկ քաւորկինը ջուր է տաքացնում, և կանանց գլուխները լուանում:

Ննջեցեալի շորերից հները նուիրում են ննջեցեալին լողացնողին և գերեզման փորողներին, իսկ նորերը՝ քահանային:

Տարելիցին կրկին պատարագ են մատուցանել տալիս և հոգեհացի հրաւիրով հիւրասիրում զրեթէ ամբողջ գիւղը՝ մօրթելով 5—10 ոչխար և կամ 1—2 եզ:

Գերեզման.—Գերեզմանատները գտնւում են գիւղերի մօտ, ճանապարհների կողքին: Իւրաքանչիւր գերեզատանի գերեզմանները խմբուած են լինում միմեանց մօտ: Գերեզմանները փորում են սովորաբար մի մետր խորութեան, իսկ կանանցն փոքր ինչ աւելի խորը, որովհետև «մահը նրանցից է յառաջ եկել, Նւան է խարել Ադամին և մահուան պատճառ դարձել»: Գերեզմանի խորքում շուրջանակի կէս մետրաչափ սալեր են շարում և երբ ննջեցեալին իջեցնում են գերեզման, երեսը սալ քարերով ծածկում են, ծակերը ցեխով կաշնում և ապա հողով լցնում: Գերեզմանի թմբի վրայ էլ խաշածև զնուս են դադաղի փոխարէն գործածուած շորերը, որ այսպէս երեք օր մնալուց յետոյ տանում են գործ ածուս: Գերեզմանահատին վարձատրում են միայն մի կամ միքանի անգամ ճաշի հրաւիրելով: Հարուստների գերեզմանների վրայ քառանկիւնի, մօտ մի մետր բարձրութեան, տնակաման շէնք են շինում, որի մի կողմը կիսաբոլոր, մեծ բացուածք ունի, ինչպէս նրանց երեսբաց կոչուած սենեակը, և սրա մէջ մի փոքրիկ խորշ կայ, ուր խունկ են ծխում և մոմ վառում: